I

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԸ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Գրավոր սկզբնաղբյուրներից հայտնի Մեծ Հայքի և Ծոփքի հռչակավոր քաղաքները՝ ինչպիսիք են Արմավիրը, Երվանդաշատը, Դվինը, Արշամաշատը, երկու Արսամեաները, Սամոսատը, նախ տեղայնացվել, ապա և փաստացի բացահայտվել են հին ճանապարհորդների, հնախույզների և հնագետների շարունակական պրպտումների շնորհիվ, իրենց հասցեագրված ժլատ տողերի փոխարեն՝ տրամադրելով նյութեղեն բազմապիսի վկայություններ: Այս վիճակին արժանացավ նաև քաղաքամայր Արտաշատը, որի տեղադրությունը երկար ժամանակ պարզ չէր, այն անգամ սխալմամբ նույնացվում էր Դվինի ավերակների հետ, մինչև որ 1967 թ. Խոր Վիրապի բլուրներից ոչ հեռու հայտնաբերվեց Տրայանոս կայսեր ընդարձակ լատիներեն արձանագրությունը:

Դեռևս այս բախտին չի արժանացել մ.թ.ա. 70 թվականից քիչ առաջ Տիգրան Բ-ի (մ. թ. ա. 95–56) կողմից հիմնադրած նրա աշխարհակալության գլխավոր նստավայրերից մեկը՝ Տիգրանակերտը, որի որոնումները սկսել և որին բազմաթիվ տողեր են նվիրել արդեն իսկ Վերածննդի դարաշրջանից սկսած: Նկարիչ և ճարտարապետության տեսաբան Լեոն-Բատիստա Ալբերտին (1404-1472) գրում է. «Մենք կարդում ենք, որ Տիգրանը, երբ հիմնադրում էր Տիգրանակերտ քաղաքը, ստիպեց մեծ թվով հարգելի, անվանի մարդկանց տեղափոխվել այստեղ ամբողջ իրենց ունեցվածքով, հրաման արձակելով, որ այն ամենը, ինչ նրանք այնտեղ չեն տանի և ինչ կգտնվի ուրիշ տեղում, կդառնա գանձարանի սեփականությունը: Նույնը, ընդ որում կամովին, կանեն հարևանները, ինչպես և օտար ժողովուրդների բարեկամները, հենց որ համոզվեն, որ այստեղ կարելի է ապրել ողջ ու առողջ, բավական լավ, ազնիվ ու բարեկիրթ մարդկանց մեջ»[1]*: Անտիկ աղբյուրներից քաղած ու դարեր անց վերաիմաստավորած այս տողերից երևում է, որ Տիգրանի և նրա հռչակավոր նստավայրի մասին հիշողությունները եվրոպական հնասեր մտավորականության համար արդեն միջին դարերում սիրված ու կորուսյալ անտիկ աշխարհի մասունքներ էին դարձել:*

Հին աշխարհի ստվերները կրկին երևակելու մղումով՝ Արևելք ուղևորվող ճանապարհորդները հարկ են համարել անպայման այցելել նաև Հայաստանի հնավայրերը: Զինված անտիկ գրավոր աղբյուրների տեղեկություններով, Տիգրանակերտը որոնում էին Հայաստանի և Միջագետքի սահմաններին:

[1] Л е о н - Б а т т и с т а А л ь б е р т и. Десять книг о зодчестве: в двух томах, т. I. М., 1935, с. 211.

Տիգրան Մեծն իր տերության գլխավոր նստավայր, թերևս, պատշաճ կհամարեր հռչակել Լևանտի խոշորագույն քաղաքներից Անտիոքը, որը հայոց արքայի կողմից Ասորիքը նվաճելուց հետո դարձավ նրա գահանիստ քաղաքներից մեկը: Անտիոքը՝ Տավրոսյան լեռներից և նրա ճյուղավորությունը կազմող Ամանոսից հարավ, հարմար էր վերահսկելու համար Օրոնտի ավազանը, Միջագետք տանող կարավանային ճանապարհները, հարավային Սիրիան, Պաղեստինն ու Եգիպտոսի ցամաքային սահմանները, իսկ փյունիկյան ծովափին մոտ գտնվելը թույլ էր տալիս աչալուրջ հետևել Միջերկրածովի ավազանի հետ կապվող խոշոր նավահանգիստներին, ինչպես Սելևկիան, Բիբլոսը, Սիդոնը, Տիրը: Ուստի, Օրոնտի գետաբերանում կառուցված Անտիոքը Տիգրանի կայսրության դարպասներն էին դեպի արևմուտք և հարավ-արևմուտք՝ թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ մշակութային առումով:

Նույն ժամանակ, Տիգրանի տերության կազմում է՛լ ավելի աճեց Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատի նշանակությունը որպես խաչմերուկ՝ Փոքր Ասիայի և Իրանական սարահարթի, ինչպես նաև Պարսից ծոցի ու Սև ծովի ավազանի երկրների միջև տնտեսական և քաղաքական առնչություններում: Սակայն նշված երկու խոշոր քաղաքները՝ Անտիոքն ու Արտաշատը, մի տեսակ եզրային դիրք էին գրավում տերության հյուսիսում և արևմուտքում ու միմյանցից բավական հեռացած էին, եթե անգամ դրանք հուսալի կապվելու էին արքայական պողոտայով:

Տիգրան Մեծի առավել ընդարձակ տիրույթներն իրականում գտնվում էին արևելքում՝ Պարթևական արքայից արքաներին նախկինում պատկանող, իսկ հետո էլ Տիգրանին անցած երկրամասերում, որոնք փռված էին Զագրոսի լեռնաշղթայից արևելք՝ Կասպից և Արալյան լճերի, Ինդոսի արևմտյան վտակների ու Պարսից ծոցի միջև: Այստեղ՝ Մետաքսի ուղու վրա, ծաղկում էին այնպիսի քաղաքներ՝ ինչպես Էկբատանը, Մարգիանայի Անտիոքը, Բալխը, Տաքսիլան: Սակայն Պարթևներն ու անտիկ դարաշրջանի վերջում բարձրացած նրանց քաղաքական հետնորդները՝ Սասանյանները, իրենց տերությունների քաղաքական կորիզը (Տիգրիսի Սելևկիան, Կտեսիֆոնը) հիմնել էին Իրանից դուրս՝ Միջագետքում՝ անմիջական շփման մեջ լինելու համար ժամանակի ամենազարգացած տնտեսական և մշակութային կենտրոնների հետ:

Տիգրան Մեծի օրոք, թեև Առաջավոր Ասիայի պատմությունն արդեն կերտվում էր Մեծ Հայքի գլխավորությամբ, սակայն Արտաշատը, նոր նվաճումներից հետո, հայտնվել էր տերության հյուսիսային եզրին, իսկ պետության ծանրության կենտրոնը աստիճանաբար տեղափոխվում էր հարավ, հարավ-արևմուտք և Պարսից ծոցի ափերը: Նոր իրավիճակում կայսրության սիրտը, ինչպես Պարթևների և Սասանյանների դեպքում, բուն երկրից դուրս էր գտնվում, այն Միջագետքի և Հայաստանի հարավային սահմաններին գործող պողոտան էր, որը դարեր շարունակ ձգվում էր Հյուսիսային Սիրիայի և Հյուսիսային Միջագետքի վրայով՝ մի կողմից դեպի Իրանական աշխարհ և Պարսից ծոց, իսկ մյուսից՝ Փոքր Ասիա, Միջերկրածով և Սև ծովի ափերը: Եփրատի ու Տիգրիսի միջին հոսանքներում ձևավորված տափաստանը և այն արևելքից արևմուտք հատող մայրուղին Տիգրանի տերության առանցքն էին. այն հաստատուն տիրելու դեպքում Հայաստանի կողմից վե-

բահսկելի էին և՛ իրանական Արևելքը, և՛ արևելյան Միջերկրածովը: Հակառակ դեպքում տերությանը սպառնում էր երկփեղկում: Հետևաբար, հենց այստեղ էր նպատակահարմար կենտրոնացնել պետության կառավարման ընդհանուր լծակները և հսկայածավալ պետության համար կառուցել նոր մայրաքաղաք: Անտիոք-Արտաշատ-Էկբատան եռանկյան ուղիղ կենտրոնում էլ գտնվում էր այս ճակատագրական կիզակետը: Կ. Էկհարդի խոսքերով ասած՝ Տիգրանն իսկույն ըմբռնեց Արտաշատի հետ կապված այս անպատեհությունը, և հարկ համարեց նշված տարածաշրջանում փնտրել հարմարագույն մի վայր, ուր կարելի կլիներ իր նոր մայրաքաղաքը հիմնել[2]:

Հին գրավոր սկզբնաղբյուրների տեղեկությունների լույսի ներքո՝ պատմագիտության մեջ Տիգրանակերտի գրաված տեղի մասին ձևավորվել են իրարամերժ երկու մոտեցումներ: Գիտնականների մի մասը (Զախաուն, Մոմզենը), քաղաքը փնտրում է Արևմտյան Տիգրիսի աջափնյակում՝ Միջագետքում, իսկ մյուսը (Լեման-Հաուպտը, Կիպերտը, Մոլտկեն, Էկհարդը, Ֆրիցը[3]) տեղայնացնում է Հայաստանում՝ Տիգրիսի հյուսիսային ափի մոտ՝ նրա ձախակողմյան վտակների վրա: Ընդ որում՝ երկու կողմն էլ բերում է փաստարկներ ոչ միայն հին գրավոր աղբյուրներից, այլև պատմական աշխարհագրությունից և ռազմավարական նկատառումներից ելնելով[4]:

Խնդիրն այնքանով է բարդ, որ մեր տրամադրության տակ եղած գրավոր սկզբնաղբյուրները, անգամ նույն հեղինակին պատկանողները, որոնց կանդրադառնանք ստորև, տարբեր և հակասական տվյալներ են հաղորդում Տիգրանակերտի գրաված տեղի մասին:

Թ. Մոմզենը Տիգրանակերտն աներկբա տեղադրում էր Տիգրիսից հարավ՝ Հյուսիսային Միջագետքի սահմանին՝ սաստելով, որ նա «ով ամրոցը զետեղում է գետի հայկական սահմաններում, պատմությունն այնպես է շրջում, ինչպես, եթե որևէ մեկը Մեց և Ստրասբուրգ քաղաքները կամենար տեղափոխել Հռենոսի աջ ափերը»[5]:

Թ. Մոմզենը հենվում էր մեր կողմից վկայակոչվող պատմիչներից ամենահնի՝ Ստրաբոնի հետևյալ տեղեկության վրա. «Լեռների երկայնքով ձգվող մարզը բավական բարեբեր է: Այս մարզի մի մասում, որը գտնվում է Եփրատի և Զևգմայի մոտակայքը (Կոմագենեի ներկայիս կամրջի և Թափսակոսի հին կամրջի միջև), բնակվում են միգդոնացիք, որ այսպես են կոչված մակեդոնացիների կողմից: Նրանց երկրում է գտնվում Նիսբիսը, որը նաև կոչում են Միգդոնիայի Անտիոք: Քաղաքը փռված է Մասիոս լեռան լանջին, այնպես, ինչպես և Տիգրանակերտը,

---

[2] *Կ. Էկհարդ. Տիգրան Բ և հայ-լուկուլլյան պատերազմները: Աշխատասիրեց հ. Գարեգին Գարանֆիլյան Մխիթ. ուխտեն, Վիեննա, 1926, էջ 28:*

[3] *Խարզանի աջափնյակում՝ Դերսա գյուղի տեղում. տե՛ս* F r e d. F r i t z. Codex Cultur-Atlas. Teil 9, Türkey, S. 776.

[4] *Հարցի մատենագիտությունը տե՛ս* W. B e l c k. Aus den Berichten über die armenische Expedition, 9. Majafarkin und Tigranokerta.– Zeitschrift für Ethnologie, 1899, S. 266 ff.

[5] T h. M o m m s e n. Die Lage von Tigranokerta.– Hermes, Band IX, Berlin, 1875, S. 129. *Տե՛ս նաև՝ Կ. Էկհարդ. նշվ. աշխ., էջ 32:*

Կարրեսի և Նիկեփորի մարզերը, *Քորդիրազան և Միննական, ուր զոհվեց Կրասոսը» (*Strabo, XVI, 1, 23)[6]: *Մոմզենի մյուս կռվանը Տակիտոսի հաղորդումն էր: Հռոմեացի պատմիչը մ. թ. I դ. դեպքերի կապակցությամբ տալիս էր մի ուշագրավ տեղեկություն. հռոմեական զինված ուժերի «ցենտուրիոն Կասպերիոսը, հանդիպելով [Վաղարշ] արքային* Մծբին քաղաքի մոտ, որը Տիգրանակերտից հեռու է երեսունյոթ հազար ոտնաչափ, *կտրուկ հաղորդեց իրեն տված հանձնարարությունը» (*Tacit., Ann., XV, 5*): Արդյունքում, Մոմզենն առաջարկեց որոշակի տեղայնացում և հայ-հռոմեական պատերազմում կատարված՝ սրանից բխող դեպքերի ծավալման հետևյալ կարգը. «Զմեռվա ընթացքում Կապադովկիայի արքան գաղտնի պատրաստեց երթևեկելի նավեր, որոնցով հռոմեացիները Մելիտենեի մոտով Եփրատի վրայով անցան հակառակ ափը, որպեսզի հետո շարժվեն առաջ՝ Տավրոսի վրայով դեպի Տիգրիսը: Ամիդի (Դիարբեքիր) մոտ՝ անցնելով Տիգրիսի մյուս ափը, Լուկուլլոսը ուղղություն վերցրեց դեպի ճանապարհը, որը միացնում էր Հայաստանի հարավային սահմանին կառուցված երկրորդ մարաքաղաքը՝ Տիգրանակերտը, հին նստավայր Արտաշատի հետ: «Արքայից արքան», որը նոր էր վերադարձել Սիրիայից, հռոմեացիների հետ սկսված խնդիրների պատճառով, առայժմ հետաձգելով իր նվաճողական ծրագրերը Միջերկրական ծովի ավազանում, գտնվում էր Տիգրանակերտի մոտ… նրան տեղեկացրին Լուկուլլոսի մոտենալու մասին, որը սպառնում էր կտրել նրա հաղորդակցությունը Արտաշատի հետ… նա ստիպված էր թողնել նոր մայրաքաղաքը և անցնել ներքին Հայաստան, այստեղ նախապատրաստվելու համար Հռոմի հետ պատերազմին»[7]:*

Հ. Կիպերտը, ընդհակառակը, Տիգրանակերտը տեղայնացնում էր ձախից Արևմտյան Տիգրիսը թափվող վտակներից Արզնի (Խարզան՝ հին Նիկեփորիոն) աջ ափին՝ համանուն ավերակների մոտ[8]: Սակայն Հ. Կիպերտն իր տեսակետը փոխեց Թ. Մոմզենի եզրակացության ազդեցությամբ և հարեց Տիգրանակերտը Տիգրիսից հարավ տեղադրելու վարկածին[9]: Է. Զախաուն այն տեղադրեց ավելի որոշակի՝ Տիգրիսի աջ ափին, Մասիոս լեռների հարավային ստորոտին, Մարդին քաղաքից քիչ հեռու գտնվող Թել-Էրմենի ավերակույտի մոտ[10]: Թ. Մոմզենն այս տեղայնացմանն արձագանքեց հետևյալ տողերով. «Զախաուն, որն այս խնդիրը հետազոտել է տեղում, ապացուցեց, որ Տիգրանակերտը գտնվում էր Մարդինի մերձակայքում, Մծբինից մոտավորապես երկու օրվա ճանապարհի վրա դեպի արևմուտք, սակայն այս քաղաքի համար նրա առաջարկած ճշգրիտ տեղայնացումը դեռևս մնում է վիճելի: Մինչդեռ, Լուկուլլոսի արշավանքի՝ նրա շարադրման եղանակի դեմ է խոսում այն հանգամանքը, որ նրա ընդունած երթուղու դեպքում խոսք չի կարող

---

[6] *Այս և հետագա մեջբերումներում ընդգծումները մերն են:*

[7] Т. М о м м з е н. История Рима, III. От смерти Суллы до битвы при Тапсе. М., 1941, с. 58. *Ինչպես տեսնում ենք, ենթադրված է, որ Տիգրանի քաղաքը գտնվել է Տիգրիսի աջ ափին:*

[8] H. K i e p e r t. Über die Lage der armenischen Hauptstadt Tigranokerta.– Monatsbericht der Akademie der Wissenschaften zu Berlin, 1873, S. 117.

[9] T h. M o m m s e n und H. K i e p e r t. Die Lage von Tigranokerta.– Hermes, Band IX, Berlin, 1875, S.139.

[10] E. Z a c h a u. Über die Lage von Tigranokerta.– Abhandlungen der Akademie der Wissenschaften zu Berlin, 1880.

լինել Տիգրիսն անցնելու մասին»[11]*: Ֆելդմարշալ Հ. Մոլտկեն՝ առաջնորդվելով զուտ ռազմավարական նկատառումներով, առաջարկեց Տիգրանակերտը տեղադրել Տիգրիսից հյուսիս՝ Նփրկերտի տեղում (հետագայում հայտնի Մայաֆարկին՝ այժմ Սիլվան քաղաքի մոտ)*[12]*: 1898–99 թթ. պատմական Հայաստանի հարավում, հենց տեղում հարցը լուսաբանելու համար, ուղեգրական հատուկ ուսումնասիրություն կատարեցին Կ. Լեման-Հաուպտը և Վ. Բելքը: Մանրամասն հետախուզելով Սղերդի և Մայաֆարկինի մերձակայքը, նրանք ծանրակշիռ փաստարկներ բերեցին, որոնց համաձայն, Տիգրանակերտը գտնվել էր Տիգրիսի հյուսիսային ավազանում՝ Մայաֆարկին քաղաքի տեղում: Նրանց ուսումնասիրությունների արդյունքները լույս տեսան պարբերականներում և Լեման-Հաուպտի նշանավոր մենագրության մեջ*[13]*: Հետագայում Հ. Կիպերտը ևս Փոքր Ասիայի իր քարտեզներում Տիգրանակերտի տեղայնացման խնդրում հարեց Կ. Լեման-Հաուպտի վարկածին: Սկզբունքորեն հաղթանակ տարավ Տիգրանակերտը Տիգրիսի հյուսիսային ավազանում տեղադրելու ուղղությունը:*

Վերջերս՝ այս հենքի վրա, Տիգրանակերտը Մայաֆարկինից ավելի արևելք՝ Խարզան գետի ավազանում տեղադրելու մի հետաքրքիր վարկած էլ ծնվեց. այն մի փորձ է բարելավելու Հ. Կիպերտի առաջադրած տարբերակը, որի համաձայն, ինչպես տեսանք վերը, հռչակավոր քարտեզագիրը Խարզան գետը նույնացնում էր Նիկեփորիոն գետի հետ, իսկ Արզանը՝ Տիգրանակերտ քաղաքի: Բ. Հարությունյանը, գտնելով, որ Մայաֆարկինը Ծոփքի քաղաքներից էր, իսկ Տիգրանակերտը չէր կարող գտնվել Ծոփքում, այլ եղել է Աղձնիքում, նախ Կիպերտի նման առաջարկեց Աղձնյաց Խարզան գետը նույնացնել հին Նիկեփորիոնի հետ: Սակայն Արզանը, ի տարբերություն Տիգրանակերտի մասին ունեցած տեղեկության, գետի ափին չի գտնվում, ուստի առաջարկվեց Տիգրանակերտը փնտրել Խարզան գետի աջ ափին գտնվող Կալե կոչված լեռան շրջակայքում, «որտեղ գետի հոսանքը աստիճանաբար թեքվում է արևմուտք և բաժանվում բազմաթիվ բազուկների ու դառնում անցանելի»: Միաժամանակ, արվեց ենթադրություն, որ Պնտինգերյան տախտակի Cumiza *և* Nararra *(համապատասխանաբար՝ Անանուն Ռավեննացու աշխատության* Cimiza *և* Nabarra*) կայանների տակ պետք է հասկանալ Բաղեշ և Նփրկերտ տեղանունները*[14]*: Հեղինակը 2001 թ. հրատարակած քարտեզում Տիգ-*

---

[11] Т. М о м м з е н. *Նշվ. աշխ., էջ 58:*

[12] H. M o l t k e. Briefe über Zusände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835-1839, № 48, Berlin, 1877, S. 287.

[13] W. B e l c k. Aus den Berichten über die armenische Expedition. 9. Majafarkin und Tigranokerta.– Zeitschrift für Ethnologie, 1899, S. 263-275; C. L e h m a n n. Über Tigranokerta.– Verhandlungen der 46. Versammlung deutscher Philologen und Schulmänner in Strassburg, 1902, Leipzig, 1904, S.25-34; C. F. L e h m a n n - H a u p t. Eine inschrift aus der Spätzeit Tigranokertas.– Klio VIII, 1908, S. 497-520; C. F. L e h m a n n - H a u p t. Armenien einst und jetzt. Reisen und Forschungen. Erster Band: Von Kaukasus zum Tigris und nach Tigranokerta. Berlin, 1910, S. 381-429, 501-523; *Հ. Տ ա ղ յ ա ն. Տեղագրական. Հին Տիգրանակերտի տեղը ըստ Լեմանի.– «Հանդես ամսօրյա», 1907, էջ 20-26:*

[14] *Բ. Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրության հարցի շուրջ.– Հայկազյան հայագիտական հանդես, հ. ԺԴ, Բեյրութ, 1994, էջ 23-31 և հաջ: Հարկ է նշել, որ դեռևս անցյալ դարի կեսին Բ. Բ. Պիոտրովսկին արդեն նկատել էր, որ սեպագիր աղբյուրներում հիշվող Արմե (Ուրմե) երկիրը «հավանաբար, գտնվում էր Արածանու և Տիգրիսի միջև ու հարևանում էր*

բանակերտը հարցական նշանով տեղադրում է Արզան գետի աջ ափին. այս նույն տեղն արդեն ամրագրված է 2005 թ. քարտեզում և նրա անգլերեն տարբերակում[15]*:*

Ուշագրավ է, որ մինչև այսօր էլ Հ. Կիպերտի առաջարկած հին տեղայնացման վարկածը Արզանի մոտ վերջնականապես չի մերժված, և մեզ հասած տվյալների համաձայն, վերջերս էլ այստեղ կատարվել են տեղագրական ուսումնասիրություններ, սակայն առկա հին ամրությունների վերգետնյա մնացորդները շատ վատ են պահպանված: Անտարակույս, Տիգրանակերտը բոլոր կողմերից, այդ թվում նաև լեռնանցքներ տանող ճանապարհների տարբեր կետերում, պետք է պաշտպանված լիներ հզոր ամրոցներով, իսկ նրա հետ հարևանությամբ պետք է զարգանային նաև տարբեր եղանակներով մայրաքաղաքին կապված բնակավայրեր, ուստի որևէ ամրոցի կամ անգամ նախկինում անհայտ քաղաքի բացահայտումը նշված տարածաշրջանում դեռ չի վկայում, թե գտնված է Տիգրանակերտը[16]*:*

Զավեշտական է, բայց Տիգրանակերտը Աղձնիքում՝ Մայաֆարկինի տեղում, ամրագրելու առավել հուսալի տեղայնացումը կամ ուղղակի չի բխում գրավոր սկզբնաղբյուրների տեղեկությունների մեծ մասից, կամ էլ հակասության մեջ է դրանց հետ: Թերևս, Մայաֆարկինի օգտին բերված ամենաթափանցիկ ակնարկն անում է Պլուտարքոսը՝ հաղորդելով հետևյալը. «…երբ Տիգրանը՝ անցնելով Տավրոսը*, երևաց իր շքախմբով և տեսավ Տիգրանակերտի մոտ դիրքավորված հռոմեական բանակը, պաշարված բարբարոսները նրա երևալը դիմավորեցին ծափողջույններով ու խլացուցիչ գոռոցներով և* պարսպի վրայից սկսեցին հռոմեացիներին սպառնալով մատնացույց անել հայերին*» (*Plut., Lucul., XXVII*): Սակայն «Տավրոս»-ի տակ կարելի է հասկանալ ոչ միայն Արևելյան կամ Հայկական Տավրոսի լեռները, այլև նրա հարավային ճյուղավորությունը՝ Մասիոսի լեռները: Այս դեպքում Տիգրանակերտի տեղը կրկին մնում է անորոշ:*

Հ. Կիպերտը, փոքր-ինչ, սակայն էական հետևանքների հանգեցնող, փոփոխության ենթարկեց Տակիտոսի միտքն այն բանի մասին, որ Մծբին քաղաքը «Տիգրանակերտից հեռու է երեսունյոթ հազար ոտնաչափ*» (*Tacit., Ann., XV, 5*): Նա սրբագրեց հիշյալ թիվը, գտնելով, որ «37»-ի՝* septem et triginta*-ի փոխարեն (որը կկազմեր 55 կմ), թերևս, շատ ավելի ճիշտ կընթերցվեր «130»-ը՝* centum et triginta[17]*: Այս 130 մղոնը համազոր է 192 կմ, և այսքան կարող էր կազմել Մծբինից մինչև Կիպերտի որոնած Արզանը, եթե ուղին ընթանար Մասիոսի լեռնանցքներով և ձգվեր Ամիդից արևելք մի ավելի կարճ ճանապարհով ու եթե ճանապարհի ոլորանների պատճառով ավելացած վազքը անտեսվեր: Հակառակ դեպքում, Տակի-*

Նախիրիա քաղաքի (գլխավորած) երկրին, որի անունը մոտ է հին հայկական Նբֆբր (Նփր, Նփրկերտ) քաղաքի անվանը, որտեղ կառուցվել է Տիգրանակերտը». տե՛ս Б. Б. П и о т р о в с к и й. О происхождении армянского народа. Ереван, 1946, с. 9.

[15] *Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Վ. Գ. Մ խ ի թ ա ր յ ա ն. Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, Երևան, 2001: Բ. Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Վ. Գ. Մ խ ի թ ա ր յ ա ն. Տիգրան Մեծի տերությունը, Երևան, 2005,* B. H a r u t y u n y a n, V. M k h i t a r y a n. The Empire of Tigran the Great. Yerevan, 2007.

[16] *Օգտվելով առիթից՝ Արզանի շուրջ հետազոտությունների նախնական արդյունքների մասին մեզ որոշ բանավոր մանրամասներ հայտնելու և տեղանքի լուսանկարներ փոխանցելու համար հայտնում ենք մեր երախտագիտությունը հնագետ Ա.-Գ.Պլոնտկեին:*

[17] H. K i e p e r t. *Նշվ. աշխ.:*

տոսի տվյալի համաձայն, Տիգրանակերտը պետք է գտնվի Հյուսիսային Միջագետքում, այլ ոչ թե Տիգրիսի հյուսիսային ափերին, իսկ քաղաքին մոտ գտնվող լեռները պիտի լինեն Տուր-Աբդինի լեռները:

Հարցն ավելի է խճճվում, երբ քննարկման մեջ ներգրավվում են Ստրաբոնի հաղորդումները: Դրանցից մեկը վկայում է, որ «Հյուսիսային լեռները կրում են այդպիսի անվանում (Պարաքսաթրաս– Հ. Հ.), իսկ Կապադովկիայից և Կոմագենից արևելք՝ Եփրատի մյուս կողմում ձգվող հարավայինները սկզբում կոչվում են Տավրոս, որը բաժանում է Ծոփքը և մնացած Հայաստանը Միջագետքից: Ոմանք այս լեռները կոչում են Գորդյան լեռներ: Վերջիններիս թվին է պատկանում նաև Մասիոսը, որը վեր է խոյանում Մծբինից ու Տիգրանակերտից վերև: *Ապա Տավրոսն ավելի վեր է բարձրանում և կոչվում է Նպատ: Այստեղ՝ լեռան հարավային կողմում են գտնվում Տիգրիսի ակունքները»* (Strabo, XI, 12, 4*): Ստրաբոնի բերած* τὸ Μάσιον, τὸ ὑπερκείμενον της Νισίβιος ’όρος καὶ των Τιγρανοκέρτων (Strabo, XI, 12, 4) *հատվածի Մասիոս լեռները, ԼեմաՎն-Հաուպտի կարծիքով, կարելի է հասկանալ նաև այլ կերպ. «Տավրոսը, որի արևելյան՝ իբր թե Մասիոս նշանակված, հատվածին է վերաբերում Հազրու-դաղլար կոչված կարևոր լեռնագոտին, ձգվում է արևելյան-հարավարևելյան ուղղությամբ, անցնելով արևմտյան Տիգրիսը, հետևաբար այս վերջինից ճեղքվելով Հասանքեյֆ կոչված վայրում. այս ըմբռնմամբ Տոր (Տուր-Աբդին)-ը կազմում է Տավրոսի արևելյան-հարավարևելյան տոդանը»*[18]*:*

Կ. Լեման-Հաուպտի համաձայն, Հազրու լեռները պատկանում են Մասիոս լեռնաշղթային, որ տարածվում է դեպի Տիգրիսի թե՛ աջակողմը և թե՛ ձախակողմը: Եվ քանի որ, Միջագետք ասելով, անցյալում հասկացվում էր ոչ միայն Եփրատի ու Տիգրիսի միջև տարածվող երկրամասը, այլև շատ անգամ՝ ըստ քաղաքական ու վարչական բաժանման, նաև Տիգրիսի ձախակողմյան ակունքը՝ անդրտիգրիսյան երկրները՝ մինչև Հազրու լեռները, այստեղից հետևում է, որ հակառակ ակներև տարաձայնությանը Ստրաբոնը ևս լիովին միաբան է Լեման-Հաուպտի վարկածին[19]*:*

*Նույն ոգով, Պլուտարքոսի հետևյալ տողերում, Միջագետքն էլ կարելի էր երկակի մեկնել. «*Տիգրանը*… հնազանդեցրեց բազմաթիվ ժողովուրդներ, պարթևների հզորությունը կոտրեց այնպես, ինչպես որ դեռ ոչ ոքի չէր հաջողվել, և* Միջագետքը ողողեց հույներով, որոնց մեծ բազմությամբ նա բռնի տեղահանեց բնակեցրեց այնտեղ Կիլիկիայից և Կապադովկիայից*: Մյուս ժողովուրդներից նա քշեց նախկին տեղերից* նախ արաբների քոչվոր ցեղերին, որոնց բնակեցրեց իր մայրաքաղաքին մոտ*, որպեսզի օգտագործի նրանց առևտրական կարիքների համար»* (Plut., Lucul., XXI*):*

Ն. Ադոնցի մի հայտնի մտքի համաձայն, քաղաքական տարբեր ելևէջների հետևանքով, սեմիտների հավակնությունը երբեմն հասնում էր մինչև Արածանու ավազանը, իսկ հայերինն էլ նույն ոգով, մինչև հյուսիսային կամ Հայկական Միջա-

[18] *Տե՛ս Կ. Է կ հ ա ր դ. նշվ. աշխ., էջ 31-32:*

[19] *Նույն տեղում:*

գետք. «Այս կամ այն պետության քաղաքական գերիշխանությունից կախված, հաճախ Հայաստանում փոխվում էին մշակութային կյանքի կենտրոնները և բնույթը: Այս փոփոխությունները բերում էին բնակչության նոր տեղաբաշխման, ցրելով էթնիկական ալիքներ համապատասխան կողմերը: Միջլաստիկան հաճախ Հայաստան է տեսնում այնտեղ, որտեղ աշխարհագրական տերմինները չէր կարելի արդարացնել նախկին էթնիկական բովանդակությամբ, և, ընդհակառակը, անտեսում է կամ էլ բավարար չափով հաշվի չի առնում հայերի նշանակությունը այլ շրջաններում»[20]*:*

*Լեման-Հաուպտի վարկածի օգտին է խոսում նաև Տակիտոսի այն հաղորդումը, որ «*քաղաքային ամրությունների մի մասի առաջ հոսում է Նիկեփորիոս բավական լայնահուն գետը*»* (Tacit., Ann., XV, 4)*: Այս գետը Պլինիոսը համարում է Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկը (*Plin., Nat. Hist., VI, 27, «129)[21]: *Ավելին՝ Տիտոս Լիվիոսից կրճատած-փոխադրած մի հատվածում Եվտրոպիոսը (*Eutrop., Breviarium VI, c. 9) *ասում է, որ Տիգրանակերտը գտնվում է Աղձնիք (*Arzanene*) երկրի սահմաններում, այսինքն՝ Տիգրիսի հյուսիսակողմում:*

Լեման-Հաուպտն առաջիններից էր, որ հարցի պարզաբանման համար ընդգրկեց նաև հայ գրավոր սկզբնաղբյուրներ. «Առին ավերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ որ էր ի գավառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին»[22]*: Հնարավոր է, որ Բուզանդի օրերի Աղձնիքի սահմանները տարբերվում էին անտիկ ժամանակներում եղած Ծոփքի ու Աղձնիքի սահմաններից, և հայ պատմիչը ներկայացնում է իր օրերի իրողությունը, սակայն ստույգ մեզ հայտնի չէ նաև անտիկ դարաշրջանի վարչական իրավիճակը, և եթե վկայված է, որ Տիգրան Մեծի կողմից Ծոփքը կցվել է Մեծ Հայքին, ապա աղբյուրներում նշած չէ, թե արդյո՞ք դրանից առաջ Տիգրանի նախորդները չէի՞ն սկսել աստիճանաբար Ծոփքից վերցնել առանձին հատվածներ, թե՞ Տիգրանը միանգամից էր նվաճել ողջ Մեծ Ծոփքը: Վերջապես Մեծ Հայքին միանալուց հետո Ծոփքի վարչական սահմանները կարող էին և՛ սեղմվել, և՛ ընդարձակվել նոր պետության կազմում, ինչը կարոտ է նոր աղբյուրների տվյալների: Ապա Բուզանդը ավելացնում է որ սուրբ Եպիփանը՝ Մեծ Դանիելի աշակերտը, Ներսես մեծ քահանայապետի մահվանից հետո եկավ բնակվեց Մեծ Ծոփքում, Մամբրե կոչված տեղի անապատում, Մամուշեղ անունով գետի վրա: Նա Ծոփք երկիրը լցնում էր վանքերով, մեծապես լուսավորում էր ժողովուրդը: Անցնում է նաև Աղձնյաց երկիրը, նրանց էլ լուսավորում է և մի վկայարան է շինում Տիգրանակերտ քաղաքում, և սրբերի հիշատակն էին այնտեղ կատարում*[23]*: Տիգրանակերտն այնուհետև ի պատիվ IV դ. նահատակված սրբերի և նրանց այս վկայարանի կոչվեց Մարտիրոսաց քաղաք (*Martyropolis*), որ ասուրերեն ասում*

[20] Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 2.

[21] T h. M o m m s e n und H. K i e p e r t. Die Lage von Tigranokerta.– Hermes, Band IX, Berlin, 1975, S. 141.

[22] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, Չորրորդ դպրութիւն, գլուխ ԻԴ, էջ 219:* C. L e h m a n n. Über Tigranokerta…, S. 25. *Տե՛ս նաև Խ ո ր է ն ա ց ի, Ա, լ:*

[23] *Տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Հինգերորդ դպրութիւն, գլուխ ԻԷ, էջ 330–331 («և լնոյր զերկիրն Աղձնեաց վաներով, և շինէր վկայանոց մի յավանին ի քաղաքին Տիգրանակերտի»):*

էին Mīyāfārīqīn *(Նփրկերտ): Նույն տարածաշրջանում «մ» և «ն» սկզբնատառերի ձայնաշրջման վերաբերյալ ցայտուն օրինակ է հայոց Մծբին և ասուր.* Nşīwīn *(*Nisibis*) տեղանունը: Հետագայում էլ՝ արաբական տիրապետության օրոք, առաջացավ* Maijāfarqin *ձևը, որ թուրքերենում փոխադրվում է նաև որպես Ֆարկին*[24]*: Մի այլ խնդիր է Մայաֆարկին-Տիգրանակերտը Ամիդ (Դիարբեքիր) քաղաքի հետ շփոթելը, որի սկիզբը դրվել է դեռ հնում, Ամիդ փոխադրված տիգրանակերտցիների կողմից*[25]*:*

Այսպիսով, Լիվիոսը, Եվտրոպիոսը և Փավստոսը *հաշտ են միմյանց հետ այն խնդրում, որ Տիգրանակերտը գտնվում էր Աղձնիքում: Սա հաստատում են բոլոր հին աշխարհագիրները՝ ընդունելով որ քաղաքը զբաղեցնում էր Տիգրիսի ձախակողմը. սա տեսնում ենք և՛ Պլտինգերյան, և՛ Պտղոմեյան քարտեզներում*[26]*:*

Անցյալ դարի սկզբներին Լեման-Հաուպտի դիտարկումները հայագետ Հ. Տաշյանը, հույժ կարևոր համարելով, փոխադրել է հայերեն, որի որոշ հատվածներ բերում ենք ստորև՝ ավելի մանրամասն ծանոթացնելու տվյալ խնդրում ձեռք բերած արդյունքներին:

*«Տեղույն համար պահանջուած պայմաններն են՝ մօտը մեծ դաշտ մը նշանաւոր գետի մը վրայ որ տեղույն սեպհական նկարագիրը մ'ընծայէ. գետը պետք է ըլլա լայն և շատաջուր, եւ նաեւ հոկտեմբերին՝ ուստի ջրերու նուազութեան ատեն՝ դժուարանցանելի ըլլայ: Տէլ-Էրմէնի քով այս ամենը բոլորովին կը պակսի: Գետը դարձեալ դէպ ի արեւմուտք դարձուածք մ'ունենալու է, զոր Լուկուլլոս ռազմագիտօրեն յօգուտ գործածեց: Քաղաքն ալ շուրջանակի ոռոգելու է «գետ մ'ոչ արհամարհելի լայնութեամբ» (*amnis haut spernenda latitudine*): Բայց աստի՝ իբրեւ երկրորդական պայման՝ նոյն տեղը գտնուելու են այսօր ալ մեծամեծ աւերակներ ոռոգելի քարէ, ինչպես կը պահանջէ Հայոց արուեստի ոճը: Արդ այս ամէն պահանջուածները կը ներկայացընէ* Նփրկերտ *(*Mīyāfārīqīn*, սովորաբար* Farkîn *եւ* Maiafarkîn *կոչուած), զոր շուրջանակի կ'ոռոգէ ջրաշատ* Ֆարկին-սու*, որուն հարաւ-արեւելք ուղղութեամբ Բաթման-սու (*Batman-su*) տանող կիրճը բնական անց մըն է դեպ ի հարաւ-արեւելք: Ինքը Բաթման-սու լայն գետ մըն է՝ հիւսիս-հարաւ ուղղութեամբ հոսող, ձախ ափը մեծատարած դաշտով. եւ գետը քաղաքէն 20 մղոն հեռուն՝ Ֆարկին-սուի գետախառնուրդէն անմիջապէս ետքը՝ նշանաւոր դարձուածք մը կ'ընէ դեպի արեւմուտք: Այս տեղուոյ շատ յարմար կուգայ նաեւ, որչափ ալ առերեւոյթ հակասական երեւայ, աւանդութեան ըսածը տեղույն դրից համար թէ «ի բարձունս» էր (*in excelso *Պղինիոս) եւ թէ լեռան մ'ոտքն էր (Ստրաբոն): Ինչպէս Լէմանայ առած լուսանկարը կը ցուցանէ՝ Նփրկերտ* Հազրու*-լերանց ստորոտն է,*

---

[24] *Հ ի ւ բ շ մ ա ն. Հին Հայոց տեղույ անունները, էջ 165 (թարգմ. Հ. Բ. Պիլէզիքճեան, Վիեննա, 1907. Ազգ. Մտ., ԾԳ): Կ. Է կ հ ա ր դ, նշվ. աշխ., էջ 33-34:*

[25] *Ե. Ք ա ս ո ւ ն ի. Ամիդ (Տիարպեքիր) Տիգրանակերտ (Ֆարղին) շփոթը հայ պատմագրության մեջ, Բեյրութ, 1968:*

[26] *Երկու քարտեզներն էլ տե՛ս* H. K i e p e r t. *Նշվ. աշխ.: Պլտինգերյան քարտեզը տե՛ս նաև Զախաուի մոտ՝* E. Z a c h a u. *Նշվ. աշխ.: Տիգրանակերտի դիրքը ճիշտ նշանակված է Պտղոմեոսի կողմից. տե՛ս* Ptolem. V, 13, «22:

*բայց նաեւ բարձունքի վրայ՝ համեմատելով հարաւարեւելակողմն եղող Բատմանսուի ափնադաշտին եւ միւս դաշտին՝ որ Աեւմ. Տիգրիսի հարաւակողմն է: Այս երկու ուղղութեամբ ալ գետինն երթալով կ'իջնայ. Եւ որովհետեւ հաստատապէս կ'աւանդուի թէ արդի Նփրկերտ Բիւզանդեան ժամանակի ծաղկած «Մարտիրոսայ քաղաքին» (*Martyropolis*) տեղն ըլլայ, այն ատեն վերջին ծագած ըլլալու էր Հին Տիգրանակերտէն, եթէ իրաւունք ունինք Տիգրանակերտն այս տեղ փնտռելու:*

Իրօք ալ քաղաքը զգալի նշաններ ունի թէ այլեւայլ անգամ նորանոր հիմնարկութիւններ ունեցած է: Նախնականն, որուն իշխանական կամքի մը հրամանաւ եղած ըլլալն որոշ կը տեսնուի, կը ցուցանէ բաբելական-ասորեստանեաց քաղաքներուն յատակագիծը, *յարմար Տիգրանայ՝ որ հայ-միջագետեան պետութիւն մը հիմնել կուզեր. միայն թէ հոս չորեքկուսի հիմնայատակը (*plattform*), Ասորեստանեայց "Tell"-երու անկիւնական շեղումներն անգամ ունի, փոխանակ աղիւսէ ըլլալու՝ գեղեցիկ կոփածոյ չորեքկուսի քարերէ շինուած է: Այս սարահարթին վրայ կը բարձրանար պարիսպը (արեւելեան կողմն՝ որ անպատսպար էր՝ կրկնապարիսպը) եւ անոր ետեւ՝ մասամբ պարիսպին մէջ հիւսուած՝ կը բարձրանային հսկայ շինութիւնքն, որոնց աւերակներն այսօր ալ կեցած են: Պարսպայ եւ աւերակաց մանրամասնութիւնքը կը ցուցանեն երկու լուսանկարներ, զորոնք առած է* W.Majewski, *ու այն ժամանակ ռուսական հիւպատոսն էր ի Վան, եւ զորոնք ստացած էր Լէման, երբ յիշեալ հիւպատոսին հետ կ'ուղեւորէր այս գծով՝* Ֆարկին-Լիճէ-Տիգրիսի Նէրքնուղի ջրանցքը *(յետոյ ստացաւ նաեւ Բէլք): Սարահարթի վրայ կանգուն մնացած պարիսպներն այնպէս ինչպէս այժմ են, մահմետական ժամանակէ են, ինչպէս կը ցուցնեն քուֆի եւ արաբացի տառերով բազմաթիվ արձանագրութիւններ…Քաղաքն հիւսիս-արեւմտեան անկիւնը կը բղխէ* Ֆարկին-սու *գետն այնպիսի դրից մէջ, որով կարելի էր քաղաքին չորս կողմն ջրառաջքներով պատել՝ պաշտպանութեան համար, եւ միւս կողմանէ քաղաքին մէջէն ալ անցքներ ջրոյ առատ հոսանք մը՝ ջրոյ պաշարի համար, նոյնպէս շրջակայ շատ բարեբեր հողերն ալ ոռոգել. այս ամենն այսօր ալ նոյնպէս կ'ըլլայ: Քաղաքին նիստը չորեքկուսի մըն է 500-600 մետր կողմնական երկայնութեամբ: Քաղաքին ներսը՝ հարաւային պարսպին արեւմտգոյն կողման մօտ՝ կը բարձրանայ բնական կամ արուեստական հողաբլրոյ մը վրայ՝ միջնաբերդը, ուսկից կը տեսնուի ամբողջ քաղաքն,* Հազրու (Ֆարկին)-*Լերանց ծայրը, Ֆարկին-սուի գետախառնունքը Պատման-սուի հետ, վերջնոյս ափնադաշտը եւ միւս կողման բլրաշատ բարձրադաշտը: Լէման այս միջնաբերդէն լուսանկարած է տեսարանը, (լուսանկարը շատ յաջողած էր՝ թէեւ Film-ը տարիմը մնացած էր խաւարասենեկին մէջ՝ ի Խարբերդ):*

Այս յիշեալ բարձրադաշտին վրա բնակած էր Տիգրան, երբ, արեւելքէն գալով, օգնութեան կը փութար պաշարուած քաղաքին. ուստի պաշարեալները միջնաբերդէն զինքը կրնային տեսնել, (ինչպես Պղուտարքոս կը նկարագրէ): Լուկուլլոսի ջանքն էր արգիլել, որ Տիգրան չանցնի Պատման-սու գետը: Ուստի Ֆարկին-սուի կրճին մէջէն, որ շատ հարմար էր, չուեց հարաւ-արեւելեան ուղղութեամբ դէպ ի Պատման-սու, եւ բանակեցաւ անոր աջակողմեան, արեւմտեան ափին վրայ: Ճակատամարտի օրը տարաւ իւր բանակը գետն ի վար: Եւ որովհետեւ Պատման-սու

հոս իւր ցայժմունեաց հիւսիս-հարաւ ուղղութենէն մէկնաց մեծ դարձուածք մը կ'ընէ դէպ ի արեւմուտք, հեռացաւ Տիգրանէն, որ արեւելակողմը բանակած էր. որով Տիգրան կարծեց, թե Հռովմեացիք ետ կը քաշուին: Ընդհակառակը գետնին հանգամանքը կը պահանջէր, որ հռոմայեցիք այս շարժումն ընեն: Այս տեղ գետն ջրերու նուազութեան ատեն, թէպէտ եւ շատ լայն է (0-50 մետր), բազմաթիւ տեղեր հուն ունի: Այս շարժմամբ Լուկուլլոս խոյս տալով սեպ գետափոնքներէն, որոնք քանի մը մետր բարձրութիւն ունին, եւ որով գետն անցնիլը կ'արգիլուէր, հասաւ (ըստ Բէլքի) տեղ մ'ուր գետափ երկու կողմն ալ հարթ է: Միւս կողմը, արեւելեան գետափան կողմը, բլրաշար բարձրադաշտն հետզհետէ կ'իջնայ ու կը ցածնայ մինչեւ Պատմանսուի ափը: Այս բլրոց միոյն տակ կեցած էին հայ Սպառազէնք. … Լուկուլլոս… բլրան գագաթը հասաւ՝ գոչեց νενικήκαμεν *(յաղթեցինք)…* Dr. Reglings*-ի գուշակութիւնը թէ ասկէ ըլլալու է Պատման-սուի Nicephorrius անունը՝ զոր կուտայ Տակիտոս, եւ որ յետոյ Բիւզանդացւոց ժամանակ Nymphius կը կոչուի: Եւ Պղինիոս ճիշդ այս* Nicephorius *գետը կ'ըսէ թէ Տիգրիսի* ձախակողմեան *բազուկն է որ Հայոց աշխարհէն կ'իջնայ…»*[27]*:*

*Տիգրիսի հոսանքի նկատմամբ մակերևույթը քաղաքի մոտ կտրուկ բարձրանում էր և տեղանքի նկատմամբ իշխելով՝ այս քաղաքը ռազմագիտական տեսակետից հարմար հենակետի հնարավորություն էր ընձեռում: Քաղաքի արևմտյան և հյուսիսային կողմերը պաշտպանված են բնական ամրություններով, մինչդեռ այն հարավային ու արևելյան կողմերից ավելի խոցելի էր: Մասնավորապես, քաղաքի մատույցներն արևելյան կողմից ավելի ցածրադիր ու համեմատաբար ավելի տափարակ են: Տիգրանն այս քաղաքը համաչափ հիմքերի վրա կանգնեցնելու համար կառուցել տվեց մի ընդարձակ ու բարձր քարե դարավանդ, որի վրա պետք է վեր խոյանային վերը հիշված հիսուն կանգուն բարձրությամբ ստվար պարիսպները (*App., Mithr., 84*), որոնց ներսում, անջրպետներն օգտագործելու նպատակով, գետեղել էր տվել ասպաստաններ ու շտեմարաններ: Արևմտյան և հյուսիսային կողմի պարիսպները միաշար էին ու պարզ և միայն տեղ-տեղ հսկա աշտարակներով ամրապնդված: Ի տարբերություն սրանց, քաղաքի արևելյան կողմում կանգնեցված էին եզակի ամրությամբ կրկնակի պարիսպներ ու պատնեշներ: Քաղաքն այսպիսով գրեթե անառիկ էր դարձված: Քաղաքի ներսում՝ կենտրոնից մի քիչ դեպի արևմուտք, բարձրանում էր տասնհինգ մետր բարձրությամբ մի բրգաձև բլուր, որն էլ նախատեսված էր քաղաքի միջնաբերդի կառուցման համար: Այստեղից, ինչպես ափի մեջ, երևում էր լեռնագավառի ողջ առաջակողմը՝ մինչև Բաթման-սու, հարավակողմը՝ մինչև Միջագետքի մեծ տափաստանի հյուսիսային սահմանները եզերող սարավանդները: Քաղաքի մոտերքից բխող Ֆարկին-սու գետակի ջրերը՝ հոսելով պարիսպների շուրջ, ստեղծել էին ջրով լցված բնական խանդակներ (*Tacit., Ann., XV,4)*: Ջրամբարի պաշտպանության համար, քաղաքի մերձակայքում Տիգրանը հիմնեց ևս մի ամրություն*[28]*:*

---

[27] *Հ. Տ ա շ յ ա ն. նշվ. աշխ., էջ 21-23:*

[28] C. F. L e h m a n n - H a u p t. Armenien einst und jetzt. Reisen und Forschungen…, K. 12 և 15; C. F. L e h m a n n - H a u p t. Sitzungsber. Der anthrop. Gesellschaft (21. October 1899); W. B e l c k. Aus den

*Անշուշտ, Տիգրանակերտը հայոց արքայի համար մեծ նշանակություն ուներ: Հազարավոր մարդկանց տեղահանելով, շահագրգռելով նա բերել էր մի վայր, որն ուներ ոչ միայն ռազմավարական հարմար դիրք, այլև կառուցված էր մի տեղում, որն արքայի անձի համար հույժ խորհրդանշական էր: Հռոմեական պատմիչ Ապիանոսն իր «Միհրդատյան պատերազմներում» հաղորդում է, որ հայոց արքան տեղահան արած բազմաթիվ մարդկանց բնակեցրեց «մի վայրում, ուր նա առաջին անգամ իր գլխին կրեց Հայաստանի թագը» (*App., Mithr., 67)*:*

Կ. Էքհարդի կարծիքով, շատ հավանական է, որ Տիգրանակերտի հիմնադրումից էլ դեռ առաջ այստեղ Տիգրանի նախնիների կողմից կառուցված լիներ մի որևէ քաղաք կամ գյուղ: Ուստի, բնական էր, որ Տիգրանն իր թագադրության հանդեսը ոչ թե իր պետության որևէ մի անկյունում, այլ արդեն իսկ գոյություն ունեցող, թեկուզ անգամ աննշան թվացող, վայրում պետք է ուզեր ձեռնարկել: Հետևաբար, Տիգրանակերտի հիմնարկումը ոչնչից ծագած ստեղծագործություն չէր, այլ ավարտումն էր նախապես եղած փոքրիկ քաղաքի, որի նպատակահարմար դիրքը գրավել էր Տիգրանի ուշադրությունը[29]*: Տիգրանակերտ մայրաքաղաքը հիմնելիս, անշուշտ, կիրառվել էին ժամանակի տեխնիկական նվաճումները քաղաքաշինության մեջ: Սակայն նման ծավալի քաղաքը շենացնել բնակչության տարերային հոսք ակնկալելով, հնարավոր չէր, ուստի ձեռնարկվեց հին աշխարհում շատ տարածված մի երևույթ՝ սինոյկիսմոսը (մարդկանց մեծ զանգվածների վերաբնակեցում): Սրա մասին են վկայում գրավոր սկզբնաղբյուրները:*

*Ապիանոսի համաձայն՝ «Հայոց արքան էլ՝ գերեվարելով Կապադովկիան, դեպի Հայաստան տեղահանեց մինչև 300 000 մարդ և բնակեցրեց նրանց ուրիշների հետ մի վայրում, որը նա իր անունով կոչեց Տիգրանակերտ, իսկ սա պետք է որ նշանակի «Տիգրանի քաղաք» (*App., Mithr., 67)*: Ստրաբոնն այս առիթով գրում է, որ «*Տիգրանը քաղաք հիմնադրեց*… հավաքելով այստեղ* իր կողմից ավերած 12 հունական քաղաքների բնակչությունը*»* (Strabo, XI,1 4,15*): Տիգրանը՝ Հայոց արքան, մաժակցիներին «ծանր վիճակի մեջ դրեց Կապադովկիայի վրա հարձակվելիս.* արքան բոլոր մաժակցիներին քշեց Միջագետք, կազմեց նրանցից Տիգրանակերտի բնակչությունը*» (*Strabo, XII, 2, 9): *Պլուտարքոսն էլ վկայում է, թե. «*Տիգրանակերտում ապրում էին շատ հույներ, բռնի տեղահանված Կիլիկիայից և բարբարոսներ, որոնք արժանացան նույն բախտին. ադիաբենցիներ, ասորեստանցիներ, գորդեացիներ, կապադովկիացիներ, որոնց հայրենի քաղաքները Տիգրանը ավերեց*, իսկ իրենց քշեց այստեղ և ստիպեց այստեղ բնակվել: Տիգրանակերտը* շատ հարուստ էր գանձերով և աստվածներին արված նվիրատվություններով, քանի որ ամեն մի հասարակ մարդ և իշխանավոր*, արքայի հանդեպ ունեցած հարգանքի պատճառով, իրար հետ մրցում էին քաղաքի ընդարձակման ու բարեկարգման համար» (*Plut., Lucul., XXVI*): Երևում է, որ ուժային եղանակները զուգորդվում էին շահագրգռող լծակների հետ: Ընդ որում, մասնավոր անձանց կողմից կիրառվում*

Berichten d. arm. Expedition.– Zeitschrif. Für Ethnologie, 1899, S. 263 ff; *Կ. Է կ հ ա ր դ. նշվ. աշխ., էջ 38-39:*

[29] *Կ. Է կ հ ա ր դ. նշվ. աշխ., էջ 37: Տիգրանի թագադրման մի այլ վարկածի մասին տե՛ս Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Տիգրան Մեծ, Երևան, 2005, էջ 30-31:*

էր հանրօգուտ ձեռնարկում՝ լիտուրգիա: Քաղաքի նախանշած բուն շրջանակները, դատելով վերոհիշյալ հաղորդումից, եթե այն Պլուտարքոսի գրչին սովոր հերթական լիրիկական շեղումներից չէ, շուտով չբավականացրին տարերային ծավալված կառուցապատման պահանջները, և քաղաքը սկսեց տարածվել նախնական սահմաններից դուրս: Կարելի է ենթադրել, որ այս արտաքին օղակի համար ևս հեռանկարում կպահանջվեր մի նոր ավելի ընդարձակ պարիսպ: Այս հարցին որոշակի կարող են պատասխանել միայն հնագիտական ուսումնասիրությունները:

Նշանավոր պատմաբան Թեոդոր Մոմզենը համեմատության սերտ եզրեր է ուզել տեսնել Տիգրանի, հին Արևելքի մյուս տիրակալների և սուլթանների միջև, նրանց, չգիտես ինչու, աշխարհագրական սկզբունքով արհեստական միավորելով և հելլենիստական քաղաքակրթությունից տարանջատելով: Այս ոգով է գրված նրա հայտնի մենագրության հետևյալ հատվածը. «Ինչպես ժամանակին Սալմանասարն ու Նաբուխոդոնոսորն էին հրեաներին տեղահանում ու փոխադրում Բաբելոն, այնպես էլ այժմ, նոր տերության սահմանամերձ մարզերի՝ Կորդուքի, Ադիաբենեի, Ասորեստանի, Կիլիկիայի, Կապադովկիայի բնակիչները, հատկապես հունական և կիսահունական քաղաքների քաղաքացիները պարտավոր էին իրենց ողջ ունեցվածքով՝ այն ամենը բռնագրավելու սպառնալիքի տակ, ինչ նրանք տեղում կթողնեն, տեղափոխվել նոր նստավայր՝ հսկայական քաղաքներից մեկը, որոնք ավելի շատ վկայում են ժողովուրդների չնչինության մասին, քան թե տիրակալի վեհության մասին, որոնք կարծես գետնից բուսնում էին Եփրատի ավազանի երկրներում նոր սուլթանի ազդեցիկ հրամանով՝ հենց որ փոխվում էր միապետը: Նոր «Տիգրանի քաղաքը»՝ Տիգրանակերտը, որը հիմնվեց Հայաստանի և Միջագետքի սահմանի վրա, որպեսզի մայրաքաղաք լիներ Հայաստանին նոր միավորած մարզերի համար, դարձավ նման Նինվեին և Բաբելոնին, 50 կանգուն բարձրությամբ պարիսպներով, պալատներով, այգիներով և զբոսավայրերով քաղաք, որոնք սուլթանականության անխուսափելի ուղեկիցներ են»[30]: Սա, իրոք, մի խոշոր վրձնահարվածով կերտած գունեղ նկարագրություն է Տիգրանակերտի ու նման քաղաքների մասին, որի ոչ բոլոր տողերն են, որ այսօր ընդունելի չեն համարվի: Մոմզենը ձգտում է Տիգրանակերտը համեմատել և՛ փոխաբերաբար, և՛ ուղղակի Հին Արևելքի բռնապետությունների խոշոր քաղաքների հետ: Եթե ընդունենք, որ Տիգրանը հինարևելյան բռնակալների ժառանգն էր, ապա պետք է այս շարքն առնենք նաև բոլոր մակեդոնական տիրակալներին՝ սկսած Ալեքսանդր Մակեդոնացուց և վերջացրած Սելևկյան, Պտղոմեոսյան, Բակտրիական միապետներով: Հենց Ալեքսանդրն էր, որ հույներին ու մակեդոնացիներին առաջինը ստիպեց երկրպագելու իրեն որպես կենդանի աստված, իսկ, ժամանակ առ ժամանակ, սկզբում ըմբոստանալով այս բանի դեմ, վերջիվերջո հպատակվեցին ու վարժվեցին այս իրողությանը, այն էլ այնպես, որ մոռանալով հույն-պարսկական պատերազմների ընթացքում արթնացած հայրենասիրական պաթոսը, քծնելու էին հռոմեական կայսրերին ու կուսակալներին: Այս համատեքստում, իհարկե,

[30] Т. М о м м з е н. *Նշվ. աշխ.:*

Տիգրանը հելլենիստական աշխարհի բոլոր տիրակալների հետ կիսում է հին Արևելքի ժառանգի դափնիները: Գուցե և սուլթանականության որոշ բաղադրիչներ ծնվել են հին Արևելքում և հելլենիստական Առաջավոր Ասիայում, սակայն անընդունելի է սրանց ժամանակով ու ծագումով օտար՝ քաղաքակրթության հատկանիշները փաթաթել Տիգրան Մեծի, Միհրդատ Եվպատորի և նրանց ժամանակակիցների վզին, անկախ էթնիկական պատկանելությունից: Այստեղ թաքնված է մի ենթաշերտ ևս: Եվրոպան դիտել որպես հունականության, ազատամտության ժառանգորդ ու հարատև սրանք վերարտադրելու սովոր միջավայր, իսկ Արևելքը՝ Թուրանի տափաստաններից մինչև Սահարայի անապատը՝ պորտաբույծ շքեղության, մարդու բոլոր ազատությունների նկատմամբ բռնության, արևմուտքի նվաճողների փառքը միայն կապկելու ընդունակ ամբոխներ ու կեղծ անհատներ ծնող միջավայր:

Վիճելի է նաև Տիգրանակերտը Նինվեի ու Բաբելոնի հետ համեմատելը, ինչպես փորձել են ներկայացնել Թ. Մոմզենը և Թ. Ռեյնակը: Ընդ որում, նման կարծիքի էր նաև Լեման-Հաուպտը, որը Տիգրանակերտը համեմատում էր ասորեստանյան քաղաքների հետ[31]: XX դարում կատարված պատմագիտական և հնագիտական ուսումնասիրությունները հելլենիստական երկրների պատմական տարածքում, այդ թվում նաև Հայաստանում, հաստատեցին Հ. Մանանդյանի վերոհիշյալ տողերը: Եվ եթե Ալեքսանդրիան, Անտիոքը Մարգիանայում, Արտաշատը և ուրիշ շատ համաժամանակյա քաղաքներ երբեմն հասնում էին ահռելի չափերի, միևնույն է, վերաբերում էին բոլորովին այլ պատմական դարաշրջանի և ունեին կառուցման քաղաքաշինական ուրիշ սկզբունքներ: Հիշյալ պատմաբանները, ցավոք, ավելի քիչ տվյալներ էին տնօրինում հին քաղաքների պեղումների վերաբերյալ: Ուստի, գուցե նրանց Հին Արևելքի քաղաքների հետ Տիգրանակերտը նմանեցնելու մղել էր նաև հսկա դարավանդը, որով Տիգրանակերտի հիմքերը թեք տեղանքի նկատմամբ վեր էին հանվել մի ավելի բարձր հարթության վրա. նման հարթակների վրա էին կառուցված Միջագետքի հին քաղաքներն ու տաճարները, Աքեմենյան Պարսկաստանի մայրաքաղաքներ Սուզան, Պերսեպոլիսը:

Արտաքին նմանությամբ չի կարելի նույնացնել նաև Ասորեստանում, Բաբելոնում, Վանի թագավորությունում և Աքեմենյան Պարսկաստանում կիրառվող մարդկանց խոշոր զանգվածների տեղահանությունը և նրանց նոր հիմնվող բնա-

---

[31] *Այս վարկածն առաջինը քննադատեց Հ. Մանանդյանը. «Իմ կարծիքով այս նույնացումը ոչ այնքան ճիշտ է: Բաբելոնն ու Նինվեն, ինչպես հայտնի է, ոչ իրենց տիպով, ոչ էլ հատակագծով նման չէին այն քաղաքներին, որոնք հիմնադրվեցին հելլենիստական պետություններում: Նրանք ներկայացնում էին անծայրածիր տարածք՝ տեղ-տեղ խմբված տներով հանդերձ, որոնց միջև փռված էին դաշտեր, մարգագետիններ, այգիներ ու մրգատու պուրակներ: Այստեղ բնակիչների գլխավոր զբաղմունքը ոչ թե առևտուրն ու արհեստներն էին, այլ գյուղատնտեսությունը: Նինվեն, ինչպես հաղորդում է Հովնան մարգարեն, երեքօրյա ճանապարհի չափ ուներ: Երկու համակենտրոն պարիսպներով օղակված Բաբելոնի պարագիծը, համաձայն Հերոդոտոսի տեղեկության, հավասար էր 480 ստադիոնի (Հերոդ., I, 178), այսինքն՝ մոտ 85 կիլոմետրի: Իսկ մայրաքաղաք Տիգրանակերտը… ուներ, անշուշտ, ավելի համեստ չափեր … Ամենայն հավանականությամբ, այն ինչպես իր հատակագծով, այնպես էլ առևտրա-արդյունաբերական բնույթով շատ չէր տարբերվում հելլենիստական տիպի սովորական քաղաքներից»* (Я. А. М а н а н д я н. О торговле и городах Армении. Эривань, 1930, с. 62)*:*

կավայրին ամրացնելը հելլենիստական աշխարհում, այդ թվում նաև, ինչպես վերն ասվեց, Հայաստանում կիրառվող սինոյկիսմոսի հետ. վերջինս, իր ուժային բնույթով հանդերձ, հենվում էր հելլենիստական աշխարհի միջազգային օրենքի նորմերի վրա, և Տիգրան Մեծին էլ պետք է նայել այս օրենքի տեսանկյունից:

Ինչպես հելլենիստական աշխարհի մյուս խոշոր կենտրոններում, Տիգրանակերտում ևս ծաղկելու էին տնտեսության ճյուղերը, գիտություններն ու պոեզիան: Տիգրանակերտում, պետք է կարծել, ստեղծագործելու համար նպաստավոր մթնոլորտում հավաքված էր հայտնի հռետորների, պատմիչների, թատերգուների, ճարտարապետների մի ընտրանի: Սա երևում է անգամ նրանց մի մասի նկատմամբ թշնամաբար տրամադրված և Տիգրան Մեծի կերպարը նվաստացնելու անհիմն փորձեր կատարող Պլուտարքոսի հետևյալ տողերից: Պատմիչի համաձայն՝ Տիգրանակերտում էր ապրում «Մեթրոդորոսը Սկեպսիսից, բավական գիտուն մի մարդ, ում խորթ չէր նաև ճարտասանությունը, որը Միհրդատի օրոք այնպիսի ազդեցության հասավ, որ նրան կոչում էին «արքայի հայր»[32]… Միհրդատը առաքեց նրան Տիգրանի մոտ՝ օգնություն խնդրելու հռոմեացիների դեմ»: Տիգրանի արքունիքում էր ապրում նաև աթենացի հռետոր Ամֆիկրատեսը. «Նա որպես փախստական ժամանեց Սելևկիա Տիգրիսի ափին… Հետո էլ գնաց հասավ Կլեոպատրայի՝ Տիգրանի կնոջ և Միհրդատի դստեր արքունիք»: Տիգրանը նրան ճոխ հուղարկավորեց Սաֆայի մոտ, «սա երկրում ինչ-որ տեղանուն էր» (Plut., Lucul., XXII*):*

Անդրադառնանք Տիգրանակերտի կառուցվածքին: Նախ քաղաքն ուներ հելլենիստական քաղաքաշինության կարևոր բաղադրիչ կազմող թատրոն. «քաղաքում գտնվում էին բազմաթիվ դերասաններ, որոնց Տիգրանը տարբեր տեղերից հրավիրել էր իր հիմնած թատրոնի հանդիսավոր բացման համար» (Plut., Lucul., XXIX*):*

Տիգրանն իր անունով կոչած քաղաքում էր հավաքել «իր պետության երևելի մարդկանց՝ միաժամանակ սպառնալով, որ այն ամենը, ինչ նրանք չեն վերցնի իրենց հետ, կբռնագրավվի: Նա օղակեց քաղաքը 50 կանգուն բարձրությամբ պարսպով, հաստահեղույս պարսպի մեջ շինված էին բազմաթիվ ձիանոցներ: Քաղաքի արվարձանում նա հիմնեց մի պալատ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղիներով ու լճերով. հարևանությամբ կառուցված էր մի հզոր ամրոց: … Մեքստիլիոսը, Մանկայոսին պաշարելով Տիգրանակերտում, անմիջապես կողոպտեց պալատը, քանի որ այն ամրացված չէր, իսկ քաղաքը՝ նրա կայազորով նա շրջապատեց խանդակով, դրեց մեքենաներ և փոսեր փորելով՝ ցնցեց պարիսպը» (App., Mithr., 84)*: Ինչպես երևում է, քաղաքն իր կառուցվածքով եռամաս էր և բավական նման Տիգրանի մյուս նստավայր Անտիոքին[33]: Այն բաղկացած էր. 1) 26մ բարձրությամբ*

---

[32] *Հմմտ. հայոց արքունիքում հայտնի «հայր մարդպետի» պաշտոնի հետ:*

[33] *Անտիոքը հայտնի էր իր ամրություններով, ջրամատակարարման ցանցով ու սանիտարական բարձր կուլտուրայով, թաղամասերի բարեկարգ տեսքով, քաղաքի ֆունկցիոնալ մասերի ներդաշնակ տեղաբաշխումով, հրապարակներով, պաշտամունքային ու պետական հաստատություններով, զվարճանքի վայրերով, գեղեցիկ ձևավորած ու զարդարված փողոցներով և պողոտաներով, բազմահարկ տներով: Հովհան Ոսկեբերանի տված այս քաղաքի նկարագրությունը տե՛ս Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 89-90:*

հզոր պարսպի ներսում գտնվող բուն քաղաքից՝ նախատեսված բնակչության համար, 2) Տիգրանի և արքունի խավի համար կառուցված հանգստի գոտուց, որ քաղաքի հարևանությամբ էր, քիչ նրանից հեռու[34], և 3) հզոր միջնաբերդից, որտեղ պետք է կենտրոնացած լինեին վարչական և պաշտամունքային գլխավոր շենքերը, գանձարանը[35]: Վերը հիշված պալատը՝ կողոպտված հռոմեական զորավար Սեքստիլիոսի կողմից, հենց արվարձանում գտնվող հանգստի գոտում կառուցած շենքերից մեկն էր, որը, իրոք, «ամրացված չէր», և ոչ թե այն պատճառով, որ քաղաքը կառուցելիս սա չէին հասցրել պարսպապատել, այլ, ըստ ընդունված կարգի, խորհրդանշական ցանկապատի մեջ առնված սրբազան տարածք էր (տեմենոս), որից անգամ մի թիզ հող յուրացնելը հունա-հռոմեական աշխարհում և Արևելքում հավասարազոր էր սրբապղծության: Հռոմեացիների ներխուժման լուրն առնելով՝ Տիգրանի սպասավորները, անշուշտ, այնտեղից տեղափոխելու էին մեծ արժեք ներկայացնող շարժական ողջ գույքը: Իսկ հռոմեացիներին թալանի համար բաժին հասան պուրակները, որսատեղիները, լճերը, շքեղ սրբատեղիները, տաղավարներն ու պալատական շենքերն իրենց արդուզարդով և այլ մանրամասներով:

Ասվածի լույսի ներքո ավելի պարզ է դառնում հետևյալ հաղորդման տակ թաքնված միջադեպի իրական պատկերը: «Տիգրանակերտում եղած հունական բնակչությունը ապստամբեց բարբարոսների դեմ, քաղաքը Լուկուլլոսին հանձնելու մտադրությամբ, և նա այն առավ գրոհով…Վերցնելով Տիգրանակերտում գտնվող գանձերը, բուն քաղաքը *նա թալանի հանձնեց զինվորներին…» (*Plut., Lucul., XXIX*): Զինվորներին թալանի հանձնած «բուն քաղաքը» եռամաս համալիրի այն հատվածն էր, որը նախատեսված էր քաղաքային բնակչության համար և պարսպապատ էր: Իսկ «Տիգրանակերտում գտնվող գանձերը» քաղաքի հանգստի անպաշտպան գոտում գտնվող տաղավարների ու այլ շենքերի արդուզարդին են վերաբերում, որ առանց մեծ ռազմական հմտության Լուկուլլոսը «վերցրեց»: Իսկ գանձարանն այլևս քաղաքի երրորդ մասում՝ միջնաբերդում չէր պահված. քանի որ Տիգրան Մեծի հրամանով հոգ էին տարել՝ համարձակ քաղաք մտնելով, հռոմեացիների աչքի առաջ դուրս հանել և ապահով տեղ հեռացնել Տիգրանի գանձերն ու կանանոցը[36]:*

---

[34] *Անտիոքն էլ ուներ նման մի քաղաքամերձ հանգստի գոտի՝ Դաֆնան, նրանից 40 ստադիոն կամ 7,5 կմ հեռավորության վրա, որն այնքան էր ընդարձակվել, որ կոչվում էր քաղաք: Այն Սելևկյան կայսրերի մշտական հոգատարության ու պարծանքի առարկան էր. մոտ մեկ ու կես տասնամյակ էլ Անտիոքն իր տերության նստավայրերից մեկը դարձրած Տիգրան Մեծը, կարելի է կարծել, շարունակելու էր Դաֆնայի բարեկարգման ավանդույթները: Անտիոքի այս յուրատիպ արվարձանի հետևյալ նկարագրությունը տեսնում ենք Ստրաբոնի երկում. «Անտիոքից 40 ստադիոն հեռու գտնվում է Դաֆնան, միջին չափի մի բնակավայր՝ ընդարձակ սաղարթախիտ պուրակով, որի միջով հոսում են աղբյուրներ. պուրակի կենտրոնում գտնվում է սրբազան հողակտորն ապաստանով հանդերձ և Ապոլլոնի ու Արտեմիսի սրբատեղին: Սովորության համաձայն, անտիոքցիները հարևանների հետ միասին նշում են համաժողովրդական տոնը: Պուրակի պարագիծը 80 ստադիոն էր» (*S t r a b o, XVI, 2,6*):*

[35] *Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 103:*

[36] M e m n o n. XVI. LVI; *Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 151-153:*

Պետք է ենթադրել, որ հելլենիստական Հայաստանի մյուս խոշոր քաղաքներն էլ ունեին ժամանակի քաղաքաշինության ոգուն հարազատ հենց այսպիսի կառուցվածք: Համենայն դեպս, այս սկզբունքները փոխանցվել են անգամ վաղ միջնադարյան Հայաստան, որի ցայտուն օրինակներից մեկը Դվինն էր[37]: Մովսես Խորենացին Դվին քաղաքի կառուցման և այստեղ արքունիքն ու Արտաշատում եղած բնակչությունը տեղափոխելու առնչությամբ վկայում է հայոց արքա Խոսրովը «զբաղված էր զբոսանքներով, թռչնորսությամբ և այլ որսերով, որի համար էլ նա անտառ տնկեց Ազատ գետի մոտ, որ մինչև այսօր էլ կոչվում է նրա անունով: Նա արքունիքը փոխադրում է անտառից վերև մի բլուրի վրա և շինում է արևից պատսպարված ապարանք. (այս տեղը) պարսկական լեզվով կոչվում է Դվին, որ նշանակում է բլուր: Որովհետև այդ ժամանակ… անմաքուր ջերմ օդը գարշելի հոտ էր բուրում, ուստի Արտաշատում բնակվողներն այս բանին չդիմանալով՝ կամավ հանձն առան այս տեղափոխությունը»[38]:

Այս կապակցությամբ Բուզանդն էլ գրում է, թե «Եվ հրաման տվեց թագավորն իր զորավարին՝ երկրից բազմաթիվ մշակներ հանել, անտառներից վայրի կաղնի բերել ու տնկել Այրարատյան գավառում՝ սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչև Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես անտառ տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնունի ապարանքը: Նա այս անտառը կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ անտառ էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ: Երկու անտառներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: Անտառն աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ որսի կենդանիներ ու գազաններ հավաքել ու լցնել պարսպա-

[37] *Հայագետ Գ. Տիրացյանը նկատել է, որ «վաղմիջնադարյան Դվին քաղաքի հիմնադրման մասին տեղեկությունները հանգում են հետևյալ տվյալներին. հայոց արքա Խոսրով II Կոտակը (330-338) տեղափոխեց իր արքունիքը Արտաշատից Դվին, որտեղ նա իր համար շինեց պալատ և Արտաշատի բնակիչների մի մասին տեղափոխեց այնտեղ: Դվինի մերձակայքում՝ Գառնի ամրոցից մինչև Մեծամոր գետի հոսանքը գտնվող տարածքում՝ Արարատյան դաշտում, նա տնկեց անտառներ և հիմնեց երկու արքայական արգելոց, շրջապատված պատնեշով, որտեղ կառուցեց արքայական պալատներ»: Արգելոցներից մեկը նա կոչեց իր անունով Խոսրովակերտ: Քաղաքին հարևանող արգելոցները՝ քաղաքամերձ արքայական պալատներով հանդերձ, որոնք «…արքայի և նրա շրջապատի համար որսատեղի և զվարճալի զբոսանքների վայր էին, հելլենիստական Արևելքի և Հայաստանի մասին ունեցած տվյալների համաձայն՝ հելլենիստական քաղաքի անբաժան ատրիբուտն էին: Հատուկ ուշադրության է արժանի Արտաշատի բնակչության մի մասին Դվին տեղափոխելու՝ սինոյկիսմոսի վերաբերյալ հաղորդումը, որը ևս հելլենիստական քաղաքաշինական պրակտիկայի կարևորագույն առանձնահատկություններից մեկն է, այն մի անգամ չէ, որ վկայակոչված է հելլենիստական Արևելքում և Հայաստանում… սրանց կենսունակության մասին դեռ վաղ միջնադարի սկզբնական շրջանում …երևում է նաև մյուս ցայտուն օրինակից՝ Արշակ արքայի կողմից IVդ. 60-ական թվականներին Արշակավան քաղաքը հիմնադրելիս» (տե՛ս* Г. А. Т и р а ц я н. О некоторых особенностях основания города Двина.– Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке, Ереван, 1988, с. 85-86):

[38] *Մ. Խ ո ր է ն ա ց ի. Հայոց պատմություն, խմբ., ներած. և ծանոթություն Ս. Մալխասյան, Երևան, 1981, էջ 248: Տե՛ս նաև՝ Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Գ, ը:*

պատված տեղերը, որպեսզի նրա թագավորության որսի և ուրախության տեղեր դառնան: Վաչե զորավարը անմիջապես կատարեց թագավորի ասածները»[39]*: Բերված հատվածներից առաջինում պատմահայրն, իրոք, զանազանում է արդեն վերը Տիգրանակերտում հայտնի քաղաքի երեք կառուցվածքային բաժին՝ 1) անտառ-որսատեղի, ուր, անկասկած, պիտի կառուցված լինեին նաև շենքեր, տաղավարներ, 2) միջնաբերդ, որի վրա գտնվում էր մի ապարանք, և 3) բուն քաղաքը՝ սրանից ներքև: Բուզանդն էլ որոշակի տեղայնացնում է երկու արգելոցները, մանրամասնելով, որ դրանք առանձին պարսպապատված և գազաններով լցված էին և այնտեղ ապարանքներ կառուցված, որսի և ժամանցի տեղեր սարքած: Ուստի Անտիոքը Օրոնտի ափին, Տիգրանակերտն ու վաղմիջնադարյան Դվինը հար և նման էին կառուցվածքով ու հիմնադրման եղանակներով, և փոխադարձաբար լրացնում են միմյանց զանազան բնույթի տվյալներով: Ուշագրավ է, որ այս հենքը մշակութային լանդշաֆտի տեսանկյունից դեռևս չի շահագործված գոնե հիշյալ - քաղաքների առնչությամբ, որոնք հասու են գիտնականներին և ենթարկվում են պեղումների:*

Որքա՞ն է հարատևել Տիգրանակերտը որպես քաղաք, դժվար է ստույգ որոշել առանց հնագիտական լուրջ ուսումնասիրության: Եթե հենվենք նրա տեղայնացման առավել ընդունված վարկածի վրա, նույնացնելով այն Մայաֆարկինի հետ, ապա բնակավայրը գոյություն ուներ նաև միջին դարերում՝ մի երկար ժամանակահատված, հավանաբար, մինչև մոնղոլական արշավանքների նախօրեն[40]*:*

*Տիգրանակերտ քաղաքի կործանման մասին Ստրաբոնի պատմած տվյալների համաձայն՝ «Տիգրանը քաղաք հիմնադրեց,... նա քաղաքը կոչեց Տիգրանակերտ: Սակայն Լուկուլլոսը... այստեղ հասավ քաղաքի կառուցման ավարտից առաջ: Լուկուլլոսը ոչ միայն արձակեց բնակիչներին հայրենի վայրերը, այլև գրավման ժամանակ ավերեց կիսով չափ կառուցվածը, տեղում միայն թողնելով մի փոքր գյուղ» (*Strabo, XI,14,15*)*[41]*: Սակայն սա չի համապատասխանում գոնե Ստրաբոնի ապրած (մ. թ. ա. 64-մ. թ. 20) դարաշրջանի իրողությանը, որ ենթադրել է տալիս, որ նրա Աշխարհագրությունը հետագա հեղինակները գուցե մասամբ խմբագրել են, փոփոխել: Մասնավորապես, սրան հակասում է Տակիտոսի (55–120) հաղորդումը հռոմեացիների կողմից Տիգրանակերտը մ.թ. 60թ. նվաճելու մասին, Լուկուլլոսի հարձակումից մոտ 90 տարի անց (*Tacit., Ann., XV, 2*): Այն, որ հռոմեացիները չէին նվաճում սոսկ մի փոքր գյուղ, և Կորբուլոնի զորքը կատաղի դիմադրության էր հանդիպել ամուր պարիսպներով շրջապատված քաղաքի կայազորի*

---

[39] *Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 77-78: Տե՛ս նաև՝ Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, Երրորդ դպրութիւն, գլուխ Ը:*

[40] *Քաղիրթի (Բաթման-սու) վտակ Նիկեփորիոնի (Ֆարկին-սու) ափին գտնվող քաղաքը հռոմեական դարաշրջանում ռազմական հզոր հենակետ էր, VI դարում այն Չորրորդ Հայքի կենտրոնն էր, իսկ արաբական տիրապետության ժամանակ հայտնի էր Մուֆարկին անունով: Սելջուկների օրոք, հավանաբար, արդեն կորցրել էր տնտեսական և ռազմական նշանակությունը. տե՛ս Թ. Հ ա կ ո բ յ ա ն. Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 268, 284, 398,* Г. С а р к и с я н. Тигранакерт. М., 1960.

[41] *Տե՛ս նաև՝ Ստրաբոն. քաղեց և թարգմանեց Հ. Ամառյան, Երևան, 1940, էջ 66-67:*

կողմից, հստակ երևում է Սեքստոս Հուլիոս Ֆրոնտինի (40–103) մի հաղորդումից. «Դոմիցիոս Կորբուլոնը պաշարել էր Տիգրանակերտը, և թվում էր, թե հայերը պատրաստվում են համառորեն դիմադրել պաշարմանը: Եվ ահա նա մահապատժի ենթարկեց Վանանդին՝ գերի վերցված մեծամեծներից մեկին, և նրա գլուխը բալիստայով արձակեց դեպի թշնամական ամրություններից ներս: Պատահմամբ գլուխն ընկավ ժողովատեղիի կենտրոնը, հենց այս պահին էլ բարբարոսները հավաքվել էին ժողովի: Գլուխը տեսնելով և սա ընդունելով որպես նախանշան՝ ապշած բարբարոսները շտապեցին հանձնվել» (Frontin., Strat., II, 9,5*): Մի քանի դար հետո էլ՝ վաղ միջնադարի սահմանին, Փավստոս Բուզանդը հաղորդում է Շապուհ II-ի զորքի կողմից Տիգրանակերտի ավերման մասին, այն անվանելով «զմեծ քաղաքն Տիգրանակերտ որ էր ի գավառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին. քառասուն հազար երդ զայն նոյն հետայն ի գերութիւն խաղացուցին»*[42]*: Սա մի ժամանակ է, երբ Հայաստանի անտիկ քաղաքները կործանվեցին, և քաղաքային կյանքը միառժամանակ երկրում մարեց, մինչև որ ոտքի կելնեին միջնադարյան առևտրաշատ քաղաքները: Ուստի Տիգրանակերտը, Արտաշատը և մի շարք այլ քաղաքներ ամայացան:*

Նկ. 1
Տիգրանակերտի պարսպի մեջ ագուցված հունարեն արձանագրության հատվածներն ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի:

Ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի սահմանագլխին է վերաբերում Տիգրանակերտի հունարեն ընդարձակ վիմագիր արձանագրությունը, որի քարերի մի մասը հետագա վերակառուցումների ժամանակ անկանոն հայտնվել էր պարսպի շարքերում:

1889–1899 թթ. Կ. Ֆ. Լեման-Հաուպտը հին դարպասների մոտ գտնել էր այս քարերը: Դրանք՝ թվով ութ վեմեր, տեղադրված էին եղել հյուսիսային՝ դեպի Արտաշատ տանող պողոտային նայող դարպասի մոտ: Լեման-Հաուպտի օրոք այս դարպասը վերափոխված էր, պարսպի առաջ արված էին կոր շինվածքներ, իսկ սրանց և պարսպի միջև կար

[42] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Չորրորդ դպրութիւն, գլուխ ԻԴ, էջ 219:*

անցում. վերջինիս ձախ կողմում էլ գտնվում էր արձանագրությունը, այն, ինչպես և բուն պարիսպը, տաշված էին կրաքարի վեմերից[43]: Ինչ-որ արհավիրքից հետո պարիսպը խաթարվել, ապա նորից վերակառուցվել էր, և վեմերը կրկին զետեղվել էին պարսպի նույն հատվածում, բայց առանց հաշվի առնելու նրանց գրված նախնական դիրքը: Առ այսօր արձանագրության բովանդակությունը չի ամբողջանում, և առաջարկված են զանազան վարկածներ դրանց ժամանակի և հեղինակի մասին: Համենայն դեպս, շատ հավանական է, որ քաղաքը արձանագրության մեջ ներկայացնում էր նրա քաղաքային ինքնավարության մարմինը[44]:



Նկ. 2

Տիգրանակերտի հատակագիծն ըստ Բ. Թեյլորի:

Տիգրանակերտի ավերակները դեռևս 1560 թ. այցելել էր պորտուգալացի ճանապարհորդ Անտոնիո Տենրեյրոն, որը տեսել էր նրա պարսպի մեջ ագուցված հունարեն արձանագրությունը[45]: 1849–1852 թթ. ռուս ճանապարհորդ Ե. Չիրիկովը հիշատակում էր, որ «հոյակերտ հին պարիսպները լրիվ օղակում են քաղաքը:

---

[43] *2006 թ. մեզ բախտ վիճակվեց հայտնաբերել Արցախի և Ուտիքի սահմանում կառուցված Տիգրանակերտ քաղաքի պարիսպները, որոնց հիանալի մշակված քարերը ևս, հետաքրքիր զուգադիպությամբ, Ֆարկինի պարսպի և նրա մեջ տեղադրած հունարեն արձանագիր քարերի պես կրաքարից են. սրանք միմյանց միացված էին հելլենիստական դարաշրջանում տարածված «ծիծեռնակապոչ» տեսքի խոռոչների օգնությամբ. տե՛ս Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Արցախի Տիգրանակերտ քաղաքի պեղումների նախնական արդյունքները.– Գիտահետազոտական աշխատանքի ուղեծրում. դասախոսների գիտական զեկուցումների ժողովածու, նվիրված «Հ. Աճառյան» համալսարանի 15-ամյակին, Երևան, 2007, էջ 107-112:*

[44] К. В. Т р е в е р. Очерки по истории культуры древней Армении. М.–Л., 1953, с. 288; Г. С а р к и с я н. *Նշվ. աշխ.:*

[45] *Իր պրպտումների շնորհիվ սա պարզել էր Կ. Լեման-Հաուպտը (տե՛ս* К. В. Т р е в е р. *Նշվ. աշխ., էջ 288):*

Նրանց վեց տպավորիչ, հսկա դարպասների վերնամասում, որոնցից երկուսը վաղուց արդեն զմռսված են», երևում էին բազմաթիվ արձանագրություններ[46]*: Նրանից մոտ մեկ տասնամյակ հետո հունարեն արձանագրությունը տեսել էր Բ. Թեյլորը. նա գրում է, թե այն «գտնվում էր կամարակապ անցումներից մեկի ներսում, որը տանում էր հյուսիսային դարպասից դեպի քաղաք»: Թեյլորը նաև նկատել էր, որ արձանագրությունը խիստ վնասված է*[47]*:*

Մայաֆարկինի տարբեր կողմերում գտնվող հուշարձանները՝ Նարամ-Սուենի կոթողը Պիր-Հուսեինից, պարթևական արվեստի որոշ գծեր պարունակող արքայի բարձրաքանդակը Բոշատից ևս կարող են վկայել, որ այս տեղանքը, իրոք, հնուց ի վեր ունեցել էր մի առանձնակի նշանակություն թե՛ օտարների և թե՛ տեղացիների համար[48]*:*

*Տիգրան Մեծը՝ նման հելլենիստական աշխարհի բոլոր հայտնի արքաներին, իր անունով հիմնադրել է նաև մի շարք այլ բնակավայրեր, ինչպես Մեծ Հայքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Գրավոր սկզբնաղբյուրներից հայտնի է Տիգրանավանը Գողթնում (*Ptol., V, 12,10*), Տիգրանա(վան)-ը Մարաստանում (*Ptol., VI, 2,9*), Տիգրանակոմեն Լիբանանում (*Plin., Nat. Hist., V, 81*), Տիգրանակերտ անունով երկու քաղաքներ Արցախում և Ուտիքում*[49]*: Սակայն նրա քաղաքաշինական գործունեության պսակը պիտի լիներ Հայաստանի և Միջագետքի սահմանին կառուցվող ամենամեծ Տիգրանակերտը (*App., Mithr., 84*):*

Գրավոր սկզբնաղբյուրների քննությունը թույլ է տալիս ընդարձակել այս ցանկը: Այն հանգամանքը, որ հունա-հռոմեական աղբյուրների տեղեկությունների վրա հենվելով՝ պատմաբանները Տիգրանակերտ մայրաքաղաքը տեղադրել են Տիգրիսից հյուսիս կամ հարավ, արդեն ցույց է տալիս, որ աղբյուրներում բերված տվյալները շփոթմունքի արդյունք են, ուշ խմբագրման հետևանք կամ էլ խոսում են տարածության մեջ տարբեր տեղերում բաշխված համանուն քաղաքների մասին:

Մասնավորապես, Ստրաբոնի հետևյալ տեղեկությունը, որքան էլ այնտեղ նշված Մասիոս լեռները փորձենք տվյալ համատեքստում նույնացնել Արևելյան Տավրոսի հետ, միևնույն է, դրան հաջորդած նախադասությունը միանշանակ մատնանշում է որոշակի աշխարհագրական միջավայր. «Հյուսիսային լեռները կրում են այդպիսի անվանում [Պարաքսաթրաս – Հ. Հ.], իսկ Կապադովկիայից և Կոմագենեից արևելք՝ Եփրատի մյուս կողմում ձգվող հարավայինները սկզբում կոչվում են Տավրոս, որը բաժանում է Ծոփքը և մնացած Հայաստանը Միջագետքից: Ոմանք այս լեռները կոչում են Գորդյան լեռներ: Վերջիններիս թվին է պատկանում նաև Մասիոսը, որը վեր է խոյանում Մծբինից ու Տիգրանակերտից վերև: Ապա Տավրոսն ավելի վեր է բարձրանում և կոչվում է Նպատ: Այստեղ՝ լեռան հա-

[46] Е. И. Чириков. Путевой журнал (1849–1852).– Записки Кавказского отделения Русского географического общества, кн. IX, СПб., 1875, с. XLIII.

[47] B. Taylor. Travels in Kurdistan.– Journal of Royal Geographic Society, 1865, p. 24.

[48] Nogaret Marc. Quelques problèmes archéologiques et topographiques dans la Région de Maiyafarkin.– Revue des Études Arméniennes, t. XVIII, 1984, p. 414, 423, fig. 3 et 4.

[49] *Պատմութիւն Սեբէոսի, Երևան, 1979, գլ. ԼԸ, էջ 125: Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, հ. երրորդ, գլ., Ը, էջ 300:*

բավային կողմում են գտնվում Տիգրիսի ակունքները» (Strabo, XI, 12, 4)*: Անվիճելի է Մծբինի տեղը հյուսիսային Միջագետքում, հետևաբար, եթե Մասիոս լեռները գտնվում են Մծբինից ու Տիգրանակերտից վերև, ապա երկուսով ընկած էին Հյուսիսային Միջագետքում: Շատ քիչ է հավանականությունը, որ երկու քաղաքները գտնվում էին նույն լեռան հակադիր լանջերին: Ուստի, այստեղ խոսքը Տիգրանի կառուցած Աղձնիքի Տիգրանակերտ հսկա քաղաքից տարբեր մի այլ Տիգրանակերտի մասին է: Սրա օգտին է խոսում նաև մյուս սկզբնաղբյուրը: Տակիտոսը գրում է. «Յենտուրիոն Կասպերիոսը, հանդիպելով [Վաղարշ] արքային Մծբին քաղաքի մոտ, որը Տիգրանակերտից հեռու է երեսուն յոթ հազար ոտնաչափ, կտրուկ հաղորդեց իրեն տված հանձնարարությունը»* (Tacit., Ann., XV, 5*): Հենց այս հեռավորությունը չափելով է, որ Տիգրանակերտ քաղաքը կամ ավելի ճիշտ կլինի ասել, Տիգրանակերտ քաղաքներից մեկը, Է. Զախաուն տեղադրեց ավելի որոշակի՝ Տիգրիս գետի աջ ավազանին մոտ՝ Մասիոս լեռների հարավային ստորոտին, Մարդին քաղաքից քիչ հեռու գտնվող Թել-Էրմենի ավերակույտի մոտ[50]: Նույն տվյալները ծանր ու թեթև անելով, բայց նաև Աղձնիքի պատմական աշխարհագրությանը հարազատ մնացած՝ Լուկուլլոսի զորքի անցումը Եփրատի աջ ափից դեպի Մեծ Հայքի եփրատական կողմերով Տիգրանակերտ տանող Պլուտարքոսի տվյալներին մեծ նշանակություն տված Թ. Մոմզենը երկու բևեռների մեջ ընտրել է հարավային վարկածը, սակայն հրաժարվել Զախաուի տված որոշակի տեղայնացումից, այն համարելով վիճելի, տարակուսելով, որ Լուկուլլոսն այս դեպքում չէր անցնի Տիգրիսը[51]:*

Ոչ պակաս ուշագրավ է Ստրաբոնի Աշխարհագրությունից վերն արդեն բերած մի այլ պարբերություն. «Այսքան բարձրանալով իր հզորությամբ՝ Տիգրանը քաղաք հիմնադրեց Իբերիայից ոչ հեռու՝ այս տեղի և Եփրատի ափին Զևգմայի [ξεῦγμα- կամուրջ] միջև*: Հավաքելով այստեղ իր կողմից ավերած 12 հունական քաղաքների բնակչությունը,* նա քաղաքը կոչեց Տիգրանակերտ*: Սակայն Լուկուլլոսը, որը պատերազմում էր Միհրդատի դեմ, այստեղ հասավ քաղաքի կառուցման ավարտից առաջ: Լուկուլլոսը ոչ միայն արձակեց բնակիչներին հայրենի վայրերը, այլև գրավման ժամանակ ավերեց կիսով չափ կառուցվածը, տեղում միայն թողնելով մի փոքր գյուղ»* (Strabo, XI,14,15): *Այս նախադասության մեջ նշված Իբերիան (*πλησίον ’ Ιβηρίας μεταξυ ταύτης τε καὶ τοῦ κατα τὸν Εὔφράτης Ζεύγματος)*, անշուշտ, վրիպակ է, և այն գիտնականները փորձել են յուրովի ուղղել[52]: Ստրաբոնը հետևյալ հատվածում այս քաղաքը հիշատակում է նաև Բերեյա*

[50] E. Z a c h a u. *Նշվ. աշխ.:*

[51] Т. М о м м з е н. *Նշվ. աշխ.:*

[52] С т р а б о н. География в 17 книгах. Перевод, статья и комментарии Г. А. Стратановского, М., 1964, с. 500, с. 824, ком. 17 (“Слово, по-видимому, испорчено: города Иберии в этой области не было”); *Կ. Մյուլլերը փոխարենն առաջարկել է «Խառան» (*“Carrhae”. *Տե՛ս* The Geography of Strabo: with an English translation by Horace Leonard Joans. Vol. V, London, 1969, p. 338-339): *Հ. Ամառյանը բառը խմբագրել է Օլիբերիա ((*Ὀλιβηρία*) տե՛ս Ս տ ր ա բ ո ն. քաղեց և թարգմանեց Հ. Ամառյան, էջ 67, 117:*
*Բ. Հարությունյանը, հենվելով Իբերիայի նմանությանը Պտղոմեոսի բերած Բերոյա քաղաքին՝ Կյուրեստիկեի շրջակայքում, այն տեղայնացնում է Հալեպի մոտ (*Claudi Ptolemaei Geographia,

*(*Beroea*) ձևով. «Անտիոքից արևելք հոսում է Եփրատը, ինչպես և գտնվում են Բամբիկան, Բերեյան և Հերակլեյան՝ փոքր քաղաքներ» (*Strabo., XVI, 2,7*): Թե «Իբերիան» որքանով մեզ կարող է օժանդակել հիշյալ Տիգրանակերտ քաղաքի տեղն ավելի որոշակի գտնվելու հարցում, առայժմ դժվար է ասել: Ստրաբոնի տեղեկության համաձայն՝ Տիգրանի քաղաքը գտնվել է «Իբերիայից» ոչ հեռու՝ նրա և Եփրատի ափին գտնվող Զևգմայի («կամրջի») միջև (*Strabo, XI,14,15*): Այս կամուրջը կարող է լինել Կոմագենեի Զևգման կամ էլ Եփրատ գետի այս նույն ծնկի ստորին՝ հարավային մասում գտնվող Թափսակոս կամ Զևգմա քաղաքը: Բերեյան այս երկու «Զևգմա»-ներից էլ գրեթե նույն հեռավորության վրա է, և 120-150 կմ - կողմեր ունեցող եռանկյան մեջ մեր օրերում պահպանված տեղանունների շարքում չենք տեսնում որևէ ակնարկ Տիգրանակերտ անունով բնակավայրի մասին: Ստրաբոնի բերած հատվածը կարել է համեմատել նույն հեղինակի մի այլ տեղեկության հետ, որ եղել է Մոմզենի ուշադրության ոլորտում: Ըստ Ստրաբոնի՝ «Լեռների երկայնքով ձգվող մարզը բավական բարեբեր է: Այս մարզի մի մասում, որը գտնվում է Եփրատի և Զևգմայի մոտակայքում (Կոմագենեի ներկայիս կամրջի և Թափսակոսի հին կամրջի միջև), բնակվում են միգդոնացիք, որ այսպես են կոչված մակեդոնացիների կողմից: Նրանց երկրում է գտնվում* Նիսբիսը, որը նաև կոչում են Միգդոնիայի Անտիոք: Քաղաքը փռված է Մասիոս լեռան լանջին, այնպես, ինչպես և Տիգրանակերտը, Կարրեսի և Նիկեփորի մարզերը, *Քորդիրազան և Սիննական, ուր զոհվեց Կրասոսը» (*Strabo, XVI, 1, 23)*: Սա մի ուշագրավ հատված է, որի համաձայն, Միգդոնիան, փաստորեն, տեղադրվում է Եփրատի ամենամեծ ծունկի մեջ: Սակայն այս պարագայում նրա տարածքն է ներառվում նաև Օսրոենեն, որի կենտրոնը Եդեսիան էր, իսկ դրանից ոչ շատ հեռու Խառանն էր (Կարրեսը): Այս դրվագում Մասիոսի լանջերին մոտ հիշատակվող Տիգրանակերտը, իրոք որ նույնանալու է Զախաուի գտած Թել-Էրմենի հետ՝ Մարդինից ոչ հեռու: Սակայն ինչու՞ է Ստրաբոնը այս մարզը և «Տիգրանակերտը» մոտեցնում Զևգմային և Թափսակոսին, պարզ չէ: Այստեղ հիշատակված Նիկեփորի մարզի կենտրոնն էլ՝ Նիկեփորիումը, գտնվում է Եփրատի ձախ ափին՝ ուղիղ Թափսակոսի դիմաց: «Տիգրանակերտի» անորոշ տեղայնացումը Եփրատի ափի կամուրջների և Մասիոսի ստորոտի միջև, հավանաբար, պատճառ է դարձել, որպեսզի Թ. Մոմզենը զգուշանա Զախաուի տված Թել-Էրմենի վայրը որպես Տիգրանակերտ ընդունելու մտքից: Կարծում ենք, այստեղ գործ ունենք ևս մի Տիգրանակերտի հետ, որը տարբեր է Ֆարկինի տեղում գտնվող մայրաքաղաքից և Մծբինից արևմուտք գտնվող Թել-Էրմենից: Սա էլ, հավանաբար, շփոթի է վերածվել Ստրաբոնի բերած վերջին երկու հատվածների տողերում:*

V,14,10*): Վերջինս Բերյա ձևով է նշված Պևտինգերյան Տախտակում և Բերիա՝ Անանուն Ռավենացու մոտ (*K o n r a d M i l l e r. Itineraria Romana. RΦmische Reisewge an der Hand der Tabula Peutingeriana, Stuttgart, 1916, S. 635): *Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Երևան, 1936, էջ 271 (*Tabula Peutingeriana, segm. X 4-XII)*: Նույնի վերատպությունը տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր. հ. Ե, Երևան, 1984, էջադիր էջ 216-ից հետո: Տե՛ս նաև Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Տիգրանակերտ քաղաքի տեղադրության հարցի շուրջ, էջ 14:*

Թե որտեղ կարելի է փնտրել վերը ակնարկված քաղաքը, բարդ խնդիր է: Եթե, իրոք, գործ ունենք ևս մի Տիգրանակերտի հետ, ապա նրա կառուցումը պետք է բխեր Տիգրան Մեծի տերության աշխարհաքաղաքականությունից: Ինչպես նշեցինք վերը, Տիգրանի տերության առանցքը արևմուտքից հյուսիսային Սիրիայի և Միջագետքի տարածքով (Օսրոյենեի, Միգդոնիայի, Ադիաբենեի և Մարաստանի վրայով) դեպի արևելք ձգվող մայրուղին էր, որը նույնանալու է «մետաքսի ճանապարհի» գլխավոր երակի հետ[53]: Այս ճանապարհի վրա, եթե ճիշտ են սկզբնաղբյուրները և Զախաուի տեղայնացումը, արդեն կառուցված էին Տիգրանի անունը կրող առնվազն երկու բնակավայրեր Մարդինի մոտ (Թել-Էրմենի) և Մարաստանում (Տիգրանա(կան)) (Ptol., VI, 2,9): *Այս մայրուղին կարավանային ճանապարհով ելնում էր դեպի Տիգրան Մեծի նստավայր Անտիոք և Լիբանանի տարածք, որտեղ կրկին տեսնում ենք Տիգրանի անունով մի բնակավայր՝ Տիգրանակոմեն (*Plin., Nat. Hist., V, 81*): Այս ուղին նաև վերահսկում էր Հայաստանի հարավային սահմանները: Այս նույն ռազմավարությամբ՝ Մեծ Հայքի արևելյան սահմաններին Տիգրանը կանգնեցրել էր Տիգրանակերտ անունով ևս երկու բնակավայրեր Արցախում և Ուտիքում[54]: Հայաստանի հարավային սահմանների երկայնքով ձգվող հիշյալ պողոտան մի հույժ կարևոր խաչմերուկի վրա, ուր սահմանակցում էին Հայաստանը (Կոմագենեն), Սիրիան և Միջագետքը, դուրս էր գալիս դեպի Եփրատի ափերը: Գետը վերահսկելու համար բոլոր դարաշրջաններում անհրաժեշտ էր տիրել նրա երեք կարևոր գետանցներին՝ Եփրատի բանալիներին: Դրանք էին՝ հյուսիսից հարավ Մելիտենեն, Սամոսատը և Կոմագենեի տարածքում գտնվող Զեգման: Ահա այս Զեգմայի մոտ էր ելնում Տիգրանի «հարավային պողոտան»: Ուստի, Զեգման և նրա դիմացի՝ ձախ ափին գտնվող Սելևկիա քաղաքը Տիգրանը պարտավոր էր աչքի լույսի նման պահպանել: Թե ինչպես էր Տիգրան Մեծի տերության կազմում հորջորջվում Զեգման, հայտնի չէ: Սա զարմանալի չէ, քանի որ չկա որևէ փաստատուղթ նույնիսկ Տիգրանի կարևոր նստավայր Անտիոքից, որտեղ, ստույգ հայտնի է, Տիգրանը երկար ու ձիգ տարիներ իշխել է: Ամենայն հավանականությամբ, սա էլ Ստրաբոնի* XI *և* XVI *գրքերում ակնարկված Տիգրանակերտներից մեկի գլխավոր թեկնածուն է: Այս գետանցը նույն Ստրաբոնի կողմից հիշվում է ևս մի առիթով: Մեր հեղինակը պատմում է, որ «Զեգմայի մոտ տեղադրված է Սելևկիան՝ Միջագետքի ամրոցը, որը Պոմպեոսն ընդգրկեց Կոմագենեի տիրույթների մեջ: Այստեղ Տիգրանը մահապատժի ենթարկեց Սելենեին, որին կոչում էին Կլեոպատրա, մի որոշ ժամանակ նրան զնդանը նետելով՝ Սիրիայից վտարելուց հետո» (*Strabo., XV., 2, 3*): Սելենեն մի անգամ չէ, որ Տիգրանի դեմ հանել էլ սիրիական գահի վտարանդի թեկնածուներին, իր որդիներին և ամուսիններին, հավակնելով Սելևկյանների գահին: Սելենեի՝ իր ոխերիմ թշնամու մահապատիժը, ամենայն հավանականությամբ, Տիգրանը կատարելու էր հրապարակավ, ի ցույց մյուսներին (ինչպես որ Տիգրանը վարվեց հռոմեացիներին գործակցած Կորդուքի կառավարիչ Զարբիենի հետ) տերության կարևոր կենտրոններից մեկում: Այսպիսին հանդես է գալիս տվյալ*

[53] А. П. А к о п я н. Древняя Армения в торговле Запада с Востоком (первые века нашей эры).– Советская археология, 1984, № 4, с. 78, 88, рис. 2.

[54] *Պատմութիւն Սեբէոսի, Երևան, 1979, գլ. ԼԸ, էջ 125: Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, հ. երրորդ, գլ. Ը, էջ 300:*

դրվագում Սելևկիան Եփրատի ափին՝ Զևգմայի դիմաց: Հավանաբար, հենց այս նույն վայրում էր ապաստանել հռոմեական արհավիրքից Հայաստան փախած և օրեր շարունակ ծպտված Միհրդատ Եվպատորը[55]*: Վայրի կարևորությունը, բացառիկ ռազմավարական դիրքը և հատկապես «հարավային պոդոտայի» վրա գտնվելու հանգամանքը մեզ թույլ է տալիս ավելին, քան մի այլ աշխարհագրական կետ՝ «(Ի)Բերիայից» մինչև Եփրատի ափը, Սելևկիան նույնացնել այս տարածաշրջանի երրորդ Տիգրանակերտի հետ:*

Ինչու՞ որևէ հիշողություն չի մնացել այս երրորդ Տիգրանակերտի մասին, բացի մշուշոտ ակնարկներից, կարելի է միայն ենթադրել: Զևգման, սկսած Պոմպեոսից մինչև հռոմեական տիրապետության ավարտը, Հռոմի ամենակարևոր հենակետերից էր Առաջավոր Ասիայում, որի մասին են վկայում այստեղ կատարված պեղումները՝ քաղաքը ջրամբարտակի ջրերով ողողելուց առաջ: Իսկ հռոմեացիները, ավելին քան որևէ ուրիշը, չէին հանդուրժի Տիգրանի անունով որևէ քաղաքի ներկայություն իրենց տիրույթներում, ուստի, ժամանակ անց, գետի երկու ափերին գտնվող կրկնակի քաղաքը նորից հիշվում էր իր նախկին անուններով[56]*:*

Այսպիսով, հունա-հռոմեական գրավոր աղբյուրների երբեմն խիստ շղարշված տեղեկությունների մեջ տեսնում ենք Աղձնիքում՝ ներկայիս Միլվանի մոտ հիմնադրած և Տիգրան Մեծի անունը կրող մի հսկա քաղաք, որին իր չափերի ու պատմական կարևոր դեր ունենալու պատճառով գիտնականները կոչում են մայրաքաղաք: Միևնույն ժամանակ, Տիգրանակերտ անունով ևս առնվազն երկու քաղաքներ էին գտնվում Հայաստանի հարավային սահմաններին, մեկը՝ ներկայիս Մարդինի մոտ, մյուսը, հավանաբար, Կոմագենեի ծայր հարավային կետում՝ Զևգմայի տեղում և նրա դիմաց, Եփրատի ձախ ափին: Տիգրանակերտի մասին, հենց գրավոր աղբյուրներից սկսված շփոթի պատճառով, պատմական անձինք և տեղահանված քաղաքների բնակչությունը խուսանավում է երեք Տիգրանակերտների մեջ, Լուկուլլոսն էլ մերթ հայտնվում է Եփրատի գետանցի մոտ, մերթ մայրաքաղաք Տիգրանակերտի մոտ ու Կորդուքում և մերթ Մծբինի մոտ: Տիգրանի գլխավոր քաղաքի և նրա անունով հիմնադրած մյուս բնակավայրերի խնդիրը

---

[55] *Նա փախչում է Հայաստան, դեպի «խալդայների ու իբարենների» երկիրը, իր հետևից անխոհեմաբար այստեղ քաշելով Լուկուլլոսին (*Plut., Lucul., XIX*): Գուցե «խալդայների» տակ այստեղ թաքնված է խալդական՝ քաղդեական Միջագետքը, իսկ «իբարենների» տակ՝ Իբերիա - Բերիան: Տիգրանը, համաձայն Պլուտարքոսի, Միհրդատ Եվպատորին «վերաբերվում էր արհամարհանքով ու մեծամտությամբ և նրան կալանավորի նման պահում էր իրենից հեռու՝ ճահճոտ ու վատառողջ վայրում: Սակայն այժմ կանչեց նրան իր մոտ արքունիք» (*Plut., Lucul., XXII*: Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 125): Նույն ենթագլխում, սակայն, պարզվում է, որ այս վայրում Միհրդատը «կալանավորի նման» չէր պահվում, այլ «պատվավոր գերության մեջ էր իր երկրի ծայրամասում»: Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 115: Այստեղից էր Միհրդատը փորձում բորբոքել Տիգրան Կրտսերին հակառակ Տիգրան Մեծի՝ ելույթ ունենալու Հռոմի դեմ* (Dio. Cass., XXXVI, 50, 1)*: Ուշագրավ է, որ Պլուտարքոսի տիպաբանության մեջ այս տեղավայրին առնչվող երկու պատմական անձ՝ Սելենեն և Միհրդատը, հայտնված են բռնավորի նույն կարգավիճակում:*

[56] *Նույն տրամաբանությամբ էլ՝ Արտաշատին տված պաշտոնական «Ներոնեյա» անունը ջնջվեց նրա վրայից՝ ժողովրդականություն չվայելելով, և Ներոնի անփառունակ հեռանալուց հետո ու հաջորդ իշխանությունների հետապնդած նոր քաղաքական միտումների հետևանքով:*

պատմագիտության մեջ վարկածների տեղիք կտա այնքան ժամանակ, քանի դեռ դրանք բոլորը հնագիտական ուսումնասիրության բովով չեն անցած:

СТОЛИЦА ДРЕВНЕЙ АРМЕНИИ ТИГРАНАКЕРТ

АЙК АКОПЯН

Резюме

В конце 70-х годов I в. до н. э. Тиграном Великим (95–56) был основан город Тигранакерт, засвидетельствованный многими античными, византийскими и раннесредневековыми армянскими авторами. Начиная с XIX в. в историографии сложилось немало версий относительно локализации города. Согласно ряду историков, Тигранакерт был расположен правее, т. е. южнее, течения Западного Тигра. Вторая группа специалистов руины Тигранакерта ищет к северу от Тигра – на левых его притоках Батман-су или Харзан. Хотя споры до сих пор не утихают, наиболее обоснованной кажется версия, предложенная в конце XIX в. – начале XX в. К. Ф. Леманн-Хауптом, подкрепленная разведочными и археологическими работами на юге исторической Армении и севере Месопотамии. Она указывает на руины огромного города у современного Сильвана к северу от Тигра, на берегу притока реки Кахирт (Батман-су), речки Фаркин-су (Никефорий). К. Ф. Леманн-Хауптом и В. Бельком по ходу была проверена и версия, предложенная К. Кипертом у руин Арзана. Нельзя не учитывать и другие версии, основанные на разночтениях или недосказанности древних источников. Холм Телль-Эрмени вполне может оказаться местоположением другого Тигранакерта в северной Месопотамии (версия Э. Захау), близкая к сообщению Страбона (XI,12,4). В сообщениях Страбона о локализации Тигранакерта между (И)Берией и Зевгмой, а также расширении понятия Мигдония за счет Осроены, можно усмотреть указание на третий по счету Тигранакерт, который мы локализуем на берегу Евфрата у Зевгмы Коммагенской и Селевкии на противоположном берегу. В стратегический план Тиграна, согласно данным уже локализованных поселений, входило укрепление границ Великой Армении и весьма важной магистрали Эдесса–Нисибин–Экбатан поселениями, носящими имя царя. К западу от Зевгмы, начального пункта на южной магистрали, веером расходились караванные пути на Антиохию, резиденцию Тиграна на Оронте, в Ливан, где засвидетельствовано Тигранокоме, Дамаск и Палестина. В 2006 г. группа армянских археологов раскрыла руины еще одного Тигранакерта близ Агдама, контролировав

шего пути из бассейнов Куры и Аракса на Прикаспийскую степь. Столица Армении Тигранакерт был центром эллинистической культуры и науки. Город был основан по всем правилам эллинистической градостроительной практики (синойкисм, литургия и. т. п.). Подобно другой резиденции Тиграна – Антиохии, стольный город Тиграна имел трехчастную структуру: городские застройки, акрополь, пригород-парадиз. По тем же принципам строились города в Армении также в раннем средневековье, как Двин и Аршакаван.

THE CAPITAL OF ANCIENT ARMENIA TIGRANAKERT

HAYK HAKOBYAN

Summary

At the end of the 70s of the 1st c. B. C. Tigran the Great (95-56) king of Armenia Minor founded capital Tigranakert (Tigranokerta of Greek-Roman sources) on the south borders of Armenia with Mesopotamia. The localization of the capital is still debatable. Two groups of scholars localize Tigranokerta either in the south of West Tigris, in northern Mesopotamia or north of Tigris, on the banks of its tributes Farkin-su (near Silvan) or not far from Harzan. The version by K.F.Lemann-Haupt and W.Belck is well grounded, based on data of reconnaissance and excavations. The versions offered by other sources and scholars are also actual. Another town Tigranakert (version given by E.Zachau) must be placed near modern Mardin in north Mesopotamia, while the third one might be founded (due to Strabo; XI, 12, 4) or just renamed by the Armenian king near Zeugma and Seleukeia on opposite banks of the Euphrates. The main route of Tigran's empire Edessa-Nisibis-Ecbatana was enforced with fortresses and towns as two Tigranakerts, Tigranavan (in Media). Two more Tigranakerts have been found in the east, near Caspian steppes: now the ruins of one of them are unearthed north of modern Aghdam which controlled ways to the Caspian Sea and Caucasus. This southern main route stretched westwards to the Mediterranean Sea, a settlement Tigranocome was known in Lebanon. The capital Tigranakert was the center of the Hellenistic mode of life, culture and science; it was founded due to all known principles of the Hellenistic town-building practice (synoikismos, liturgy). The city of Tigran consisted of three parts: 1) the city proper, 2) the acropolis and 3) paradise not far from the city with palaces, sanctuaries, orchards, places for hunting and fishing. The same elements were testified for Antiocheia, another residence of Tigran on the Orontes, as well as some Armenian cities in the early Middle Ages (Dvin and Arshakavan).